

Կրթություն

Շաբաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртыиун» (образование) еженедельник 18.10.2023թ. չորեքշաբթի թիվ 43-44 (1120-1121)

Երեւանն ունի նոր ավագանի եւ նոր քաղաքապետ

Քաղաք

«Մե՛զ քաղաք են վստահել»։ Հենց մեզ։ Եվ մեզանից յուրաքանչյուրն ունի պատասխանատվության իր բաժինը՝ իր բաժին քաղաքացիությունը բարելավելու համար։ Քաղաքը բաղկացած է բնակիչներից։ Քաղաքի դեմքը, իմա՝ համապատկերը, կառուցվում է յուրաքանչյուրիս կացարանով, աշխատավայրով, հագուստով, խոսքով, վարք ու բարքով, կենցաղով... Եվ քաղաքն այնպիսին է, ինչպիսին որ մենք ենք։

«Մեզ քաղա՛ք են վստահել»։ Քաղաքակրթություն բառի առաջին բաղադրիչը քաղաքն է։ Ասել է թե՛ քաղաքը աղբյուր է եւ միաժամանակ հայելի՝ հավաքական մտավոր գործունեության եւ դրա արգասիք՝ համընդհանուր զարգացման։ Վաղ միջնադարում մեր քաղաքներն այնքան բազմամարդ էին, որքան, համամասնորեն, այսօր, ասենք, Չինաստանում եւ այնքան գեղեցիկ, որքան այսօր, ասենք, Եվրոպայում... Մենք մեր քաղաքները սիրել ենք այնպես, որքան, ասենք, Չարենցը՝ Կարսը եւ Բակունցը Կյորեան էր սիրում... Քաղաքներն ունեն իրենց գույնը, բույրը, արելը, սովերը... Բացառություն չէ նաեւ Երեւանը։ Հապա օ՞ղը, ջո՞ւրը... Ու որքան անուր է բարոյականը նստած քաղաքի բնակիչների սրտերում, այնքան քաղաքի վարդագույնը պահպանվում, բույրը՝ ծաղկանց, արելը՝ երկնաքերերից ազատ, եւ սովերը սաղարթախիտ է մնում։

«Մեզ քաղաք են վստահել»։ Ու թե վստահել են, ուրեմն՝ հավատացել են։ Ու թե հավատացել են՝ ողջ ամենաթանկը մեզ են ժառանգել։ Ու մենք՝ այդ օդի, ջրի, գույնի, բույրի, արելի ու սովերի ժառանգորդ ու տեր, ինքներս էլ նախ պիտի պահպանենք, ապա վստահենք, հավատանք ու ժառանգենք արդեն մեր ժառանգներին մեր նախնիներից ստացած ողջ ամենաթանկը։ Իսկ իմանալու համար, թե որն է ամենաթանկը, միշտ պետք է հիշենք. այն ամենը, ինչ մենք ձեռք ենք բերում վճարելով, չի կարող մեզ երջանկացնել այնպես, ինչպես այն ամենը, ինչ մեզ տրվում է ձրիաբար։

Գ.Ս.

Տիգրան Ավինյանն ընտրվեց Երեւանի քաղաքապետ

Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստում Երեւանի քաղաքապետ է ընտրվել **Տիգրան Ավինյանը**։

Շնորհակալություն հայտնելով երեւանցիներին ու ավագանու անդամներին՝ Տիգրան Ավինյանը նշել է, որ ծառայելու է Երեւանին ու Հայաստանի Հանրապետությանը՝ այն սկզբունքների հիմքով, որը հայտարարել են դեռեւս 2018 թվականին. «Ազնվությունը եւ արդարությունը, կարծում եմ, այս առումով, միշտ հաղթում են, որովհետեւ ժողովրդական արժեքները, որոնք 2018 թվականից փորձում ենք գերակա դարձնել 37-ում, ամենակարեւոր ինստիտուցիոնալ հենքն են մեր երկրի, Երեւան քաղաքի զարգացման համար», - ընդգծել է նա եւ վստահեցրել, որ Երեւանի քաղաքապետարանն իր ամբողջ ուժով ծառայելու է այն դրույթների իրականացմանը, որոնք առկա են բոլոր ուժերի ծրագրերում։



Անդրանիկ նիստում, որին մասնակցում էին «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն» եւ «Հանրային ծայր» խմբակցությունները, օրակարգային երկրորդ հարցով՝ ավագանին ընտրեց ֆինանսավարկային եւ տնտեսական, Իրավական, Քաղաքաշինության եւ հողօգտագործման, Մշակույթի, կրթության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների նախագահներին եւ նրանց տեղակալներին։

* * *

Տեղի է ունեցել Երեւանի ավագանու հանդիսավոր նիստը, որին ներկա են եղել 37 նախագահ **Վահագն Խաչատրյանը**, 37 վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**, ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանը**, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ **Կարեն Անդրեասյանը**, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ։

Բնակիչներին տված հանդիսավոր երդմամբ Տիգրան Ավինյանը ստանձնել է Երեւանի քաղաքապետի լիազորությունները՝ ընդգծելով, որ գործունեության ընթացքում կիստեղի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին, բարեխղճորեն կկատարի իր լիազորությունները՝ գործելով ի բարօրություն մայրաքաղաքի եւ նրա բնակիչների։

Քաղաքապետը երդվել է՝ ձեռքը դրած մ.թ.ա 782 թվականով թվագրված Երեւունի-Երեւանի հիմնադրման սեպագիր արձանագրության վրա։



Կառավարության նիստում

Օժանդակության ծրագիր՝ Արցախից բռնի տեղահանված ուսուցիչների համար

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը։

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իրականացրել է իրավիճակի վերլուծություն եւ հավաքագրված տեղեկատվության հիման վրա մշակել ծրագիր՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակելու եւ նրանց մասնագիտական աշխատանքի հնարավորությունը ՀՀ դպրոցներում ապահովելու նպատակով։

Ծրագրի մանրամասները ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**։ «Հատկապես՝ ուսուցիչների մասով այս պահին արդեն ունենք մեծ հետաքրքրություն։ Պետք է նշեմ, որ դիմելու պայմանները հնարավորինս հեշտացված են։ Էլեկտրոնային հարթակում ուսուցիչները, ընդամենը մուտքագրելով իրենց էլեկտրոնային հասցեն, կգրանցվեն, եւ հասանելի կդառնա թափուր աշխատատեղերի մասին ամբողջ տեղեկությունը։ Ընդ որում՝ այն խմբավորված է ըստ դասավանդվող առարկաների եւ ըստ բնակավայրերի», - նշել է նախարարը։

Հարունակությունը՝ էջ 2

Կփոխհատուցվի Արցախից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձը

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ԼՂ-ում նախնական եւ միջին, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա եւ հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը։ Գործադիր հավանություն է տվել նաեւ ուսումնարաններում, քոլեջներում եւ բուհերում տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին որոշման նախագծին։

Հարունակությունը՝ էջ 4

Սրբոց Թարգմանչաց

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Սրբոց Թարգմանչաց տոնը նշում է հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը. այս տարի այն նշվեց **հոկտեմբերի 14-ին**։

Սուրբ թարգմանիչներ **Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու** եւ **Ներսես Շնորհալու** տոնը վաղուց ձեռք է բերել համազգային նշանակություն՝ խորհրդանշելով ազգային զարթոնք, ազգերի միջև մշակութային փոխգործակցություն, համամարդկային բանական գլուխգործոցների արժեւորում։

տե՛ս՝ նաեւ էջ 12-13

«Ստեղծագործ Եվրոպա»

Կնպաստի մշակութային բազմազանությանը

ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել՝ ԵՄ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության տարեկան ֆինանսական հատկացման վերաբերյալ:

Որոշման նախագիծը բխում է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության մասին» համաձայնագրի պահանջներից:

Ծրագրին միանալով՝ հայաստանյան մշակութային ոլորտի կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում ակտիվորեն ներգրավվելու Եվրախնտգրման գործընթացին, հայաստանյան մշակութային և ստեղծարար ոլորտի կազմակերպություններին ծավալելու համագործակցություննույն ոլորտի մի շարք այլ կազմակերպությունների հետ, ինչպես նաև իրականացնելու դրամաշնորհային ծրագրեր՝ գրականության, թատրոնի, ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտարվեստի, դիզայնի և մի շարք այլ ոլորտներում:

Ըստ համաձայնագրի՝ Հայաստանը մասնակցում է ԵՄ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի հետևյալ գործողություններին՝ մշակութային տիրույթի բոլոր գործողություններին և միջոլորտային տիրույթում ներառված ծրագրի հարթակի ստեղծմանն օժանդակող գործողություններին:

Համաձայնագիրն իրականացվում է 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոմպենցիայով սահմանված կողմերի պարտավորություններին համապատասխան:

Հ. Հ.

Երաշխավորվել է 7 կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստում իրականացնելու նպատակով երաշխավորվել է 7 կազմակերպություն:

- «Էդիթ պրինտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամ
- «Հույս և ապագա» հասարակական կազմակերպություն
- «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
- «Վարդանանք կրթահամալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- «Քայլ առ քայլ» բարեգործական կազմակերպություն
- «Թիչինգ ըթադենի» կազմակերպություն:

Նույն հրամանով հաստատվել են նաև նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողներին վերապատրաստող վերընշյալ կազմակերպությունների ներկայացրած մոդուլները:

Օժանդակության ծրագիր՝ Արցախից բռնի տեղահանված ուսուցիչների համար

սկիզբը՝ էջ 1

«Օրինակ,- շարունակել է ժամանակահատվածը,- եթե քիմիայի ուսուցիչ է մուտք գործում, ապա նա միանգամից կտեսնի, թե տվյալ առարկայի քանի թափուր տեղ կա և որ բնակավայրերում: Եվ արդեն կախված այն հեռանկարից, թե որտեղ է տվյալ ուսուցիչը պատկերացնում իր բնակավայրն առաջիկա միջոցաժամկետ կտրվածքով, կկարողանա ընտրել: Ընդ որում՝ հնարավորություն ենք տվել, որ մեկ անգամ ընտրելուց հետո 10-օրյա ժամկետում ուսուցիչը կարողանա չեղարկել ու եւս մեկ անգամ նույն տրամաբանությամբ օգտվել համակարգից, եթե ինչ-ինչ պատճառներով կենցաղային այդտեղ հնարավոր չէ կազմակերպել: Այս ընթացքում նաև հնարավորինս հեշտացրել ենք փաստաթղթերի հետ կապված խնդիրները՝ հասկանալով, որ այս պահին մարդիկ, հնարավոր է, իրենց հետ չունեն աշխատանքի ընդունվելիս պահանջվող փաստաթղթային ամբողջ փաթեթը»:

Նշենք, որ ծրագրի շահառու է հանդիսանում տեղահանման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատած և «Հանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխանող այն անձը, որը ցանկություն ունի աշխատելու ՀՀ մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: Մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում որևէ առարկայից ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում, սահմանված կարգով ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում, ծրագրի շահառու հանդիսացող անձից կարող են ներգրավվել այդ հաստատություններում որպես ուսուցիչ:

Այս սկզբունքով շահառուների պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչև 2-րդ ուսումնական տարվա ավարտը: Եթե շահառուն երկու անգամ չեղարկում է ներկայացված դիմումը, ապա այլևս առաջնահերթության իրավունք չի ունենում և ուսուցչական թափուր տեղի համալրման գործընթացին կարող է մասնակցել օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում՝ ծրագրի շրջանակում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում տվյալ ուսուցիչը գրվում է ծրագրից կրկին օգտվելու իրավունքից:

Հարկ է նշել, որ ծրագրի շրջանակում ուսուցչին ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից տվյալ հաստատության միջոցով լրացուցիչ հատկացվում է լրավճար՝ մանկավարժական աշխատավարձի 30 տոկոսի չափով, իսկ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի հաստատություններ, Գեղարքունիքի մարզի Գամբարակ ու Վարդենիս համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբեյան, Իջևան ու Բերդ համայնքների հաստատությունների՝ այս ծրագրից օգտվող ուսուցիչներին՝ եւս 50,0 հազար դրամ ֆիքսված լրավճար:

Ծրագրով նախատեսվում է նաև, որ ՀՀ պետական բյուջեի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 սովորող ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին լրավճարի սահմանում»- «ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաբանակի սահմանում» միջոցառումների շահառու հանդիսանալու դեպքում այդ միջոցառումների ֆինանսավորման կարգերով սահմանված ժամկետային սահմանափակումները ծրագրի շահառու հանդիսացող ուսուցիչների նկատմամբ կիրառելի չեն, և այդ միջոցառումներով նախատեսված լրավճարները ենթակա են հաշվարկված և հաշվարկված հաստատությունների հետ պայմանագրերի կնքելու ամսվանից:



ված լրավճարները ենթակա են հաշվարկված հաստատությունների հետ պայմանագրերի կնքելու ամսվանից:

Կառավարության նիստի ընթացքում նախարար ժամանակահատվածում ներկայացրել է նաև ՀՀ դպրոցներ ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտների վերաբերյալ: Ըստ այդմ այսօրվա տվյալներով արդեն ավելի քան 13 հազար երեխաներ ընդգրկվել են ՀՀ դպրոցներում, ինչը կազմում է թիրախային խմբի մոտ 62 տոկոսը: «Ամեն օր մի քանի հազարով ավելանում է երեխաների թիվը: Կարծում են, որ մինչև հաջորդ շաբաթվա կեսերը պետք է փորձենք ամբողջությամբ ընդգրկել երեխաներին: Մի քանի կոնկրետ տեղերում ունենք տրամսպորտային ծառայության խնդիր. դրանք այն վայրերն են, որտեղ երեխաները տեղակայված են ավելի մեծ խմբերով, ժամանակավոր կացարաններում՝ հանգստյան գոտիներում, հյուրատներում: Այս հարցը քննարկել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գործընկերների հետ, և այդ խնդիրները նույնպես կարգավորվում են», - ընդգծել է նախարարը:

Ժամանակահատվածում անդրադարձել է նաև դասագրքերի խնդրին՝ տեղեկացնելով, երեխաները դասագրքերով ապահովվում են անվճար, և լրացուցիչ խմբաքանակի պատվերն արդեն ուղարկվել է: «Ընդգծում են դասագրքերի համար վճարել պետք չէ: Նաև նշեն, որ մենք փորձում ենք առաջին հերթին երեխաներին ուղղորդել այն դպրոցներ, որոնցում կան ազատ տեղեր: Այն դեպքում, երբ ազատ տեղերն արդեն սպառված են, նրանց փորձում ենք տեղավորել ծանրաբեռնված դպրոցներում: Սա հընթացս կարգավորվող գործընթաց է, և մենք սերտորեն աշխատում ենք թե՛ մարզպետարանների, թե՛ քաղաքապետարանների հետ, որպեսզի կարողանանք խնդիրները կարգավորել», - փաստել է նախարարը:

* * *

ՀՀ կառավարության «Հումանիտար կենտրոնում» ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը իր հերթին ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված աշակերտների կրթության կազմակերպման գործընթացը և Կառավարության նիստում ընդունված ուսուցիչների աջակցության ծրագրի մանրամասները:

Նրա խոսքով՝ հոկտեմբերի 12-ի տվյալներով ԼՂ-ից բռնի տեղահանված 13320 երեխա հաճախում է ՀՀ դպրոցներ, որոնցից ավելի քան 4000-ը երեւանում, մյուսները՝ մարզերում:

«Քանի որ շատ ծնողների անհանգստացնում է երեխաներին դպրոցներում տեղավորելու հարցը, պարզաբանենք, թե ինչպես պետք է վարվեն նրանք: Ծնողները պետք է դիմեն իրենց տեղակայման վայրի հարեւանությամբ գործող դպրոցներից որևէ մեկը: Եթե դպրոցում լիցենզիոն տեղերն առկա են, ապա երեխան անմիջապես

կընդունվի դպրոց՝ առանց փաստաթղթերի ներկայացման: Եթե տվյալ դպրոցում լիցենզիայով տեղերը սպառված են, ապա անհրաժեշտ է դիմել հարեւանությամբ գործող մեկ այլ դպրոց, որն ունի լիցենզիայով սահմանված տեղեր: Քաղաքացիները կարող են դիմել նաև Երեւանի քաղաքապետարան, իսկ մարզերի դեպքում՝ մարզպետարանի կրթության վարչություն, որտեղ հստակ վերլուծություն է իրականացվում, և ծնողին կուղղորդեն դպրոցի ընտրության հարցում», - նշել է փոխնախարարը:

Ըստ Արաքսիա Սվաջյանի՝ եթե բնակավայրերում բոլոր դպրոցները ծանրաբեռնված են, ապա երեխաների ընդգրկումը կատարվում է ամառյա լիցենզիայով սահմանված տեղերի քանակից: «Այս պարագայում հնարավորություն է տրվում երեխաներին ընդգրկել նաև այն դպրոցներ, որոնցում լիցենզիայով սահմանված տեղերն արդեն սպառված են»:

Փոխնախարարը տեղեկացրել է նաև, որ Լեռնային Ղարաբաղից շուրջ 1500 ուսուցիչ բռնի տեղահանվել է ՀՀ: «Սեր կողմից հավաքագրվել են հանրապետության բոլոր դպրոցներում առկա թափուր հաստիքները, որոնք տեղադրված են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում: Այդ համակարգում ստեղծված բազայի միջոցով, որը հոկտեմբերի 16-ից հետո կիրառարակվի, ուսուցիչները կարող են իրենց ընտրությամբ որոշել այն դպրոցը, որտեղ ցանկանում են որպես ուսուցիչ շարունակել իրենց գործունեությունը: Ընդ որում՝ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում մանրամասն տեղեկատվություն կլինի թե՛ դպրոցի, թե՛ առարկայի, թե՛ դասավանդվող ժամերի, թե՛ աշխատավարձի չափի մասին, և երբ ուսուցիչն ընտրությունը կատարի, ապա ինքնաշխատ եղանակով անմիջապես կծեւավորվի հայտը: Եթե ուսուցիչն ունի իր փաստաթղթերը, ապա կարող է ներբեռնել դրանք, իսկ եթե ոչ՝ առանց ներբեռնման էլ հայտը կգրանցվի: Ուսուցիչն իրավունք ունի 10 օրվա ընթացքում չեղարկել հայտը և նոր հայտ գրանցել՝ հաշվի առնելով, որ այս փուլում հնարավոր են բնակավայրի փոփոխություններ, տեղաշարժեր: Գրանցվելուց հետո ԿԳՄՍ նախարարությունում ձեւավորված հայտի հիման վրա ուսուցիչն ուղեգրվում է համապատասխան դպրոց, որտեղ նա արդեն կարող է սկսել իր աշխատանքային գործունեությունը: Սեր կողմից նաև հավաքագրվում է ուսուցիչների տվյալների բազա: Այս պահի դրությամբ շուրջ 500 ուսուցիչ արդեն իսկ հայտագրվել է, և մեր բազաներում նրանց մասին տվյալներն առկա են», - տեղեկացրել է Արաքսիա Սվաջյանը՝ ընդգծելով, որ մինչ այս պահը մարզերում արդեն աշխատանքի անցած ուսուցիչները, բնականաբար, եւս օգտվելու են այս արտոնյալ պայմաններից:

Հեղինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ



Աշխարհի հետ

Առավել մեծ թվով պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է Հայաստանում Բելգիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկ դե Մույնքին: Հանդիպմանը ներկա է եղել նաև նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է դեսպանին պաշտոնի ստանձնման կապակցությամբ և մաղթել արդյունավետ աշխատանք՝ ի շահ հայ-բելգիական բարեկամական կապերի զարգացման: Նախարարը համոզմունք է հայտնել, որ նորանշանակ դեսպանն իր ներդրումը կունենա Հայաստանի և Բելգիայի միջև հարաբերությունների առավել ամրապնդման և խորացման գործում:

Գերատեսչության ղեկավարը շնորհակալություն է հայտնել մեր երկրի համար դժվարին իրավիճակներին հետևող քաղաքական կազմակերպության համար, ինչը եական մշակութային ունի իրավիճակի կարգավորման հարցում: Նախարարն իր խորին մտահոգությունն է հայտնել

Լեռնային Ղարաբաղի տարածքում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդրի կապակցությամբ և հույս հայտնել, որ միջազգային կառույցները կկիրառեն իրենց մանդատը և գործուն քայլեր կձեռնարկեն փաստափակ առաքելության իրականացման ուղղությամբ՝ կանխարգելելու վանդալիզմի դեպքերը, որոնց հավանականությունը 2023 թվականի բռնի տեղահանումներից հետո ավելի մեծ է: Ժաննա Անդրեասյանը նշել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո՝ Լեռնային Ղարաբաղի բնակիչների բռնի տեղահանման հետևանքով, եւ հիմա առավել մեծ թվով պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիր է առաջացել, որոնց թվում են համաշխարհային քրիստոնեական մշակույթի կարևորագույն նմուշներից Գանձասարը և Ամարասը:

Նախարարը դեսպանին ուշադրությունը հրավիրել է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների կրթության իրավունքի հարցին և նշել է, որ սեպտեմբերի 19-ից հետո հայ



բնակչությունը, որից ավելի քան 30 հազարը երեխաներ են, ԼՂ-ից բռնի տեղահանվել են Հայաստանի Հանրապետություն: Այժմ ՀՀ կառավարությունը, ի դեմս ԿԳՄՍ նախարարության, ձեռնարկում է քայլեր ապահովելու բռնի տեղահանվածների ընդհատված կրթության իրավունքի իրացումը: Կողմերն անդրադարձել են հայ-բելգիական համագործակցության հեռանկարին դիտարկե-

լով համագործակցության ընդլայնումը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի բնագավառներում: Նախարար Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ նախարարությունում ստեղծվել է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության քաղաքականության բնագավառներում ֆրանկոֆոնիայի աշխատանքային խումբ, որը ղեկավարում է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Նշանակվել են համակարգող պատասխանատուներ ըստ ոլորտների՝ տարեկան միջոցառումների պլանը մշակելու և աշխատանքները կազմակերպելու համար:

Դեսպան Էրիկ դե Մույնքին պատրաստակամություն է հայտնել ներգրավվելու վերոնշյալ աշխատանքային խմբում, ինչպես նաև ֆրանսերենի զարգացման ուղղված միջոցառումների իրականացման ուղղված աշխատանքներում: Դեսպանի տեղեկացմամբ՝ Բելգիայում գործող «Պոդոսյան» հիմնադրամն առաջիկայում նախատեսում է ցուցահանդեսի բացում: Համագործակցության մյուս ուղղություններից դեսպանը մատնանշել է ուսանողների և փորձագետների փոխանակման ծրագրերը, ինչպես նաև Գեմտի և Երեւանի պետական համալսարանների միջև համագործակցության ծրագրերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություններ կայացնող մի շարք այլ հարցեր:

Շրջայց

Կոտայքի մարզի կրթական հաստատություններում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն աշխատանքային այցով եղել է Կոտայքի մարզում և շրջել մի շարք համակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Փոխնախարարի առաջին կանգառը եղել է Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը, որտեղ նա շրջել է լսարաններով, ծանոթացել շենքային և գույքային պայմաններին, զրուցել ուսանողների հետ, եղել լաբորատորիայում և ռազմագիտության լսարանում:

Քոլեջի տնօրեն Գագիկ Մեհրաբյանը նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին տեղեկացրել է, որ հանրապետության միակ էներգետիկական քոլեջում այլևս լիցենզիոն ազատ տեղեր չունեն, որպեսզի կարողանան ընդունել ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների: ԿԳՄՍ նախարարի տեղակալը տնօրենին ներկայացրել է նման դեպքում ուսանողներին ընդունելու բացառությունները, ինչպես նաև պետական աջակցության ծրագիրը: Փոխնախարարը պարզաբանել է, որ ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների համար նախարարության կողմից քոլեջին կտրվեն լրացուցիչ լիցենզիոն տեղեր՝ հաշվի առնելով, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերն այլ հաստատություններում չկան:

Այլը շարունակվել է Չարենցավանում, որտեղ նախարարի տեղակալը ծանոթացել է Չարենցավանի պետական քոլեջի պայմաններին: Ինֆորմատիկայի լսարանում Արաքսիա Սվաջյանը նաև ծանոթացել ու զրուցել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողի

հետ, որն այստեղ փոխել է նախկին մասնագիտությունը՝ հաշվի առնելով, որ ներկա բնակավայրում իր մասնագիտությամբ կրթություն իրականացնող ՄԿՈՒ հաստատություն չի եղել: Փոխնախարարն հետաքրքրվել է, թե ինչպես է ուսանողը հարմարվել նոր միջավայրին, ինչ խնդիրներ ունի: Այս քոլեջում եւս որպես առաջնային խնդիր արձանագրվել է գույք-շենքային պայմանները:

Ապագա ավտոփականագործների հետ հանդիպման ընթացքում նախարարի տեղակալը հետաքրքրվել է, թե ինչ ակնկալիքներ ունեն նրանք ստացած կրթությունից, ինչպես են պատկերացում իրենց ապագան: Ուսանողներից մեկը նշել է, որ բացի ավտոփականագործությունից՝ նաև գծագրություններ է կատարում և հավանաբար հենց այդ ուղղությամբ էլ կշարունակի հետագայում աշխատել:

Շրջայցի ընթացքում քոլեջի տնօրեն Արտակ Գրիգորյանը ներկայացրել է քոլեջում կազմակերպվող մասնագիտական կրթական ծրագրերի պահանջարկը՝ որպես մտահոգություն շեշտելով, որ հատկապես շինարարության ոլորտի մասնագիտություններով դիմորդներ չունեն չնայած որ աշխատաշուկայում այդ ուղղությամբ մեծ պահանջարկ կա:

Արձանագրելով խնդիրը՝ նախարարի տեղակալը հույս է հայտնել, որ պետության կողմից կրթաթոշակների տրամադրման նոր մոդելը, որը գործարկվել է այս ուսումնական տարվանից, կնպաստի իրավիճակի բարելավմանը: Քննարկման ընթացքում նշվել է, որ շինարարական մասնագիտու-



թյուններն ընդգրկված են գերակա համարվող մասնագիտությունների ցանկում, որոնց համար նախատեսվում է բարձր կրթաթոշակ: Զբոսաշրջային ոլորտի սպասարկում մասնագիտացմամբ սովորող 3-րդ կուրսեցիները փոխնախարարի հետ զրույցի ընթացքում տեղեկացրել են, որ շատերն արդեն իսկ աշխատում են սպասարկման ոլորտում: Ուսանողները ցանկություն են հայտնել պրակտիկան և երեւանյան 5-աստղանի հյուրանոցներում անցնելու հնարավորություն ստանալու մասին:

Արաքսիա Սվաջյանը եղել է նաև Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոցում, որտեղ այս պահին արդեն կրթություն է ստանում ԼՂ-ից բռնի տեղահանված 26 աշակերտ: Նրանցից մի քանիսի հետ դասապրոցեսի ընթացքում ծանոթացել ու զրուցել է փոխնախարարը: Արաքսիա Սվաջյանն առաջին հերթին ճշտել է արդյոք նրանք արդեն ապահովվել են դասագրքերով: Նշվել է, որ սովորողներն ապահովվել են դա-

սագրքերով և գրենական պիտույքներով:

Այնուհետև, Արաքսիա Սվաջյանը ծանոթացել է Նոր Գեղիի ակ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի նոր մասնաշենքի շինարարության մասնաշենքերից մեկի հիմնանդրոգման աշխատանքներին: Մինչ այդ քոլեջի ուսանողների դասերը կազմակերպվում են Լուսակերտում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո քոլեջն ապահովված կլինի ժամանակակից կրթության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով, հաշվի կառնվեն նաև միջավայրի ներառականության և խելամիտ հարմարեցումների պահանջները: Վերջին կանգառը Բյուրեղավանում է եղել, որտեղ նախարարի տեղակալը եղել է տեղի ավագ դպրոցում և ուսումնարանում:

Նախարարի տեղակալը Բյուրեղավանի ավագ դպրոցում ծանոթացել է դասապրոցեսի կազմակերպման ընթացքին: Դասարան-

ներից մեկում սովորող արցախցի աշակերտներն Արաքսիա Սվաջյանին պատմել են իրենց հին դպրոցի և նոր միջավայրում կազմակերպվող դասերի մասին: Ավագ դպրոցի շենքում նաև նախակրթարան է գործում, ուսնի որ հիմնական դպրոցները շենքային պայմաններին և տարածքի խնդիր ունեն:

Դպրոցի տնօրենը փոխնախարարին տեղեկացրել է, որ այս տարի նախակրթարանում նաև հատուկ կարիքներ ունեցող երեխա է ընդգրկված, որի հետ առանձին աշխատանքներ են տարվում: Դպրոցն արդեն նաև հոգեբան ունի, որը պարտադիր է բոլոր դպրոցների համար այս ուսումնական տարվանից:

Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարանում Արաքսիա Սվաջյանը կարճ զրույցներ է ունեցել ինֆորմատիկա և վարսավիրական գործ սովորող ուսանողների հետ, ուսումնասիրել նրանց ուսումնառության պայմանները, ծանոթացել ուսումնարանի շենքային պայմաններին:

Շրջայցի ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալը ՄԿՈՒ ուսհաստատություններում ներկայացրել է ոլորտի զարգացման ընթացիկ ծրագրերն ու հեռանկարները, խոսել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայրենակիցներին ուսումնական-աշխատանքային գործընթացներում ինտեգրելու անհրաժեշտության մասին: Նա նաև նշել է, որ ՄԿՈՒ հաստատությունների համակրթական առարկաների ուսուցիչները ևս կարող են մասնակցել կամավոր ատեստավորմանը և ստանալ աշխատավարձ բարձր դրույքաչափով և հավելավճարով:

Դիմորդ - 2023

Չեռակա ուսուցման քննությունների օրերը եւ քննական կենտրոնները

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը հրապարակել է 2023 թվականի չեռակա ուսուցման ընդունելության քննությունների քննական կենտրոնների ցանկը:

Երեւան քաղաքի քննական կենտրոններն են՝

- թիվ 57 հիմնական դպրոց
- թիվ 118 ավագ դպրոց
- թիվ 135 հիմնական դպրոց
- թիվ 155 հիմնական դպրոց
- թիվ 168 հիմնական դպրոց
- թիվ 170 ավագ դպրոց
- թիվ 189 ավագ դպրոց
- թիվ 190 ավագ դպրոց
- թիվ 200 հիմնական դպրոց

Մարզերի քննական կենտրոններն են՝

- Գեղարքունիքում՝ Գավառի թիվ 2 հիմնական դպրոց
- Շիրակում՝ Գյումրու թիվ 21 հիմնական դպրոց
- Լոռիում՝ Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոց
- Տավուշում՝ Իջևանի ավագ դպրոց
- Սյունիքում՝ Գորիսի թիվ 3 եւ Կապանի թիվ 6 հիմնական դպրոցներ
- Հաստատվել են նաեւ **2023 թվականի չեռակա ուսուցման միասնական քննությունների օրերը՝ ըստ առարկաների.**

- 22.10.2023 թ.- «Օտար լեզուներ»
- 23.10.2023 թ.- «Քիմիա», «Ռուսաց լեզու»
- 24.10.2023 թ.- «Հայոց լեզու եւ հայ գրականություն»
- 25.10.2023 թ.- «Կենսաբանություն», «Վշխարհագրություն»
- 26.10.2023 թ.- «Մաթեմատիկա»
- 27.10.2023 թ.- «Հայոց պատմություն», «Ֆիզիկա»

Չեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպում են անցկացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը:

Նախագիծ

Կփոխհատուցվի Արցախից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձը

սկիզբը՝ էջ 1

Ծրագրի մանրամասները ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**՝ նշելով, որ ՀՀ կառավարության որոշմամբ կապահովվեն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների կրթության իրավունքի իրացման պայմանները, կրթության շարունակականությունն ու անընդհատությունը: «Հաստատվել են կրթաթոշակի առավելագույն չափեր, եւ վստահ ենք՝ գրեթե ամբողջությամբ կկարողանանք փոխհատուցել սովորողների ուսման վարձը եւ շատ արագ վերականգնել ուսանողների կրթության իրավունքը: Մեզ արդեն իսկ դիմել են ավելի քան 500 ուսանողներ՝ բուհական համակարգից եւ նույնքան էլ՝ նախնական եւ միջին մասնագիտական կրթության համակարգից: Սյս որոշումն արդեն իսկ պահանջված է, քանի որ սրանով կարգավորում ենք նաեւ ուսանողների տեղափոխման հնարավորությունը՝ փաստաթղթերի եւ կրթական ծրագրերի տարբերությունների մասով կարգավորումներ ընձեռնելով: Քանի որ մենք ունենք նաեւ մարզային ուսհաստատություններ, հատկապես մեծ թվով քոլեջներ եւ ուսումնարաններ, այս պահին ուսանողները կկարողանան ընտրել իրենց ամենամոտ ուսհաստատությունը: Իհարկե, որոշ հարցեր կախված են նաեւ մասնագիտությունից. ցուցե ուսանողը սովորել է մի մասնագիտությամբ, որը չկա ամենամոտ ուսհաստատությունում: Հենց այդ պատճառով ենք զննել կրթաթոշակի ծանապարհով, որպեսզի մարդիկ հասկանան, որ ունեն այդ գոյնարը եւ իրենց մոտ ուսհաստատությունները ընտրեն ամենամոտը: Ուսումնական հաստատություններին հանձնարարված է, որ հնարավորինս հեշտ իրականացնեն այդ համալրումը: Այս նախագծով մենք կարգավորել ենք նաեւ տարբերությունների հարցերը. կան որոշ կրթական ծրագրեր, որոնցով Լեռնային Ղարաբաղում կրթություն իրականացվել է, իսկ Հայաստանում ոչ, կամ հակառակը: Այս բոլոր դեպքերի համար կարգավորումներ ենք տվել, որպեսզի խնդիրներ չառաջանան», - նշել է նախարարը՝ տեղեկացնելով, որ գումարն անմիջապես փոխանցվելու է ուսումնական հաստատություններին:



Նշենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը իրականացրել է իրավիճակի վերլուծություն ըստ հասանելի տվյալների: Հավաքագրված եւ վերլուծված տեղեկատվության հիման վրա՝ նախատեսվում է 2023 թվականին բուհական համակարգում ներառել շուրջ 2 116 ուսանող, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ 2 524 ուսանող: Կարգավորումների համաձայն՝ ուսանողներին տրամադրվելու է կրթաթոշակ, որը համաձայն ուսանողի եւ ուսումնական հաստատության միջեւ կնքվող պայմանագրի փոխանցվելու է հաստատություններին՝ 2023-2024 ուստարվա ուսման վճարը հոգալու նպատակով:

Ելնելով իրադրության առանձնահատկությունից՝ որոշմամբ նախատեսվում է նաեւ սահմանվող դեպքերում չկիրառել ՀՀ կառավարության 2011 թվականի N 1240-Ն որոշմամբ սահմանված կարգի ուսանողների տեղափոխության որոշ դրույթներ, որոնք նախատեսված են այն դեպքերի համար, երբ առկա է ուսանողի տեղափոխության համար անհրաժեշտ ամբողջ փաստաթղթավորումը: Կիրառելի չեն նաեւ առաջին եւ վերջին կուրսերից տեղափոխության արգելքները, ինչպես նաեւ կրեդիտների տարբերության լրացման համար նախատեսված է ավելի ճկուն ընթացակարգ՝ անհատական պլանի համաձայն:

Սահմանվել են նաեւ բակալավրի կրթական աստիճանում ըստ մասնագիտության (կրթական ծրագրերի) եւ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր

իրականացրած պետական ուսումնական հաստատություններում տրամադրվող կրթաթոշակների առավելագույն չափերի ցանկերը, որոնք հաշվարկվել են՝ ըստ տվյալ կրթական ծրագրերի ՀՀ պետական ուսումնական հաստատություններում իրականացվող ուսումնառության համար սահմանված վճարների միջին արժեքների՝ չգերազանցելով 700 000 դրամը: Նախատեսվում է, որ ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակը կտրամադրվի՝ համաձայն տվյալ ուսումնական հաստատությունում տվյալ կրթական ծրագրի համար հաստատված ուսման վճարի չափի, բայց ոչ ավելի, քան որոշմամբ սահմանված չափերը: Այսպիսով, որոշ կրթական ծրագրերի մասով սահմանված կրթաթոշակի չափը լինում է պակաս, քան որոշ բուհերում այդ ծրագրի համար սահմանված ուսման վճարը, ինչը որոշակիորեն կխրախուսի ուսանողներին տեղափոխվել մարզային հաստատություններ:

ՀՀ կառավարության «Հունանիտար կենտրոնում» Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը** եւս ներկայացրել է բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ծրագիրը:

Նրա խոսքով՝ կրթաթոշակից կօգտվեն այն ուսանողները, որոնք կտեղափոխվեն համապատասխան մասնագիտությամբ պետական ուսումնական հաստատություններ: «Առավելագույն չափերը հաշվարկված են հետեւյալ կերպ՝ վերցվել են ՀՀ-ում գործող բոլոր պետական բուհերի եւ ՄԿՈՒ ուսհաստատությունների՝ տվյալ մասնագիտություններով հաստատված վարձավճարների միջին արժեքը: Այսինքն՝ որոշ պարագաներում կրթաթոշակը կբավականացնի ուսման վարձն ամբողջապես հոգալուն, որոշ դեպքերում հնարավոր է կարիք առաջանա հավելյալ լրացնելու: Կարգով նախատեսված է փոխհատուցել 2023/24 ուստարվա վարձավճարները: Սրան զուգընթաց մենք կմշակենք նաեւ աջակցության այնպիսի մոդել, որն ավելի կնպաստի սովորողների ինտեգրմանը, եւ դրանից բացի նաեւ որոշակիորեն կխրախուսվի կրթության մեջ գերազանցությունը», - նշել է Սարգիս Հայոցյանը:

Հեղինակ՝ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Փոփոխություններ սովորողի՝ հաջորդ դասարան փոխադրման կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը: Փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է Հանրակրթության մոդ չափորոշի մեթոդական գործընթացով պայմանավորված գիտելիքների յուրացման արդյունքում սովորողների դասարանից դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրումը կանոնակարգված իրականացնելու պահանջից ելնելով:

Նոր չափորոշի ներդրմամբ յուրաքանչյուր տարվա համար առաջարկվում է ավարտական քննությունները համապատասխանեցնել գնահատման մոդ համակարգին, չափորոշի տրամաբանությամբ եւ կրթական քաղաքականությամբ: Հաշվի առնելով, որ տարրական դասարաններում մոդ չափորոշի ներդրմանը զուգահեռ՝ իրականացվելու է փոփոխություն կրթական աստիճանի ավարտին իրականացվող գիտելիքի ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների գործընթացում, մասնավորապես՝

- 4-րդ դասարանում կրթական ծրագրի ավարտին այլեւս չի իրականացվելու գիտելիքի ստուգում, եւ սովորողը կտեղա-

փոխվի կրթության հաջորդ աստիճան՝ ձեւավորված բնութագրերի հիման վրա,

- 9-րդ դասարանի ավարտական քննությունները «Գրականություն» եւ «Հայոց պատմություն» առարկաներից նախատեսվում է իրականացնել նախագծային (անհատական կամ համատեղ) աշխատանքի միջոցով: Բնագիտական առարկաների դեպքում սովորողը կունենա ընտրելու հնարավորություն՝ թեստ կամ նախագիծ: Նախագծային աշխատանքը պետք է իրականացվի առնվազն երկու բնագիտական առարկայից: Սյուս առարկաների դեպքում թեստերի միջոցով քննական գործընթացի մեխանիզմը պահպանվում է, սակայն կփոխվի առաջադրանքների բնույթը՝ դրանք համահունչ դարձնելով միջազգային ստուգատեսի թեստերի բովանդակությանը,
- 12-րդ դասարանում պետական ավարտական քննությունները իրականացվելու են թեստային եղանակով, որոնց բովանդակությունը համահունչ կլինի միջազգային ստուգատեսի թեստերի բովանդակությանը:

Այս փոփոխությամբ նախատեսվում է 2-12-րդ դասարաններում պահպանել բացակայությունների դեպքում սովորողների կի-

սամյակային գնահատականները լրացուցիչ քննությունների եւ ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով որոշելու սկզբունքը:

Համաձայն հիմնավորման՝ կրթական քաղաքականությունը նաեւ մեղավ տրամադրելու պրակտիկայից իրաժարվելու սկզբունքային առաջարկ է ներկայացնում, որը տարիների փորձի ու վերլուծությունների արդյունքում կատարված եզրահանգում է, համաձայն որի՝ մեղավի հավակնող սովորողների մոտ գիտելիքի ձեռքբերումը վերածվում է միավորային գնահատականի նկատմամբ որոշ ցավազին ընկալումների: Այն ուսումնառության ավարտին գիտելիքի առումով մրցունակ ու կարողունակ շրջանավարտ ունենալու փոխարեն երբեմն հանգեցնում է լարված ու գնահատականի նկատմամբ գերզգայուն անհատի ձեւավորմանը: Բացի այդ, մեղավը՝ որպես գերազանց ուսումնառության ավարտին մասին փաստող արդյունք, որեւէ կշիռ ու դեր չունի անհատի հետագա ուսումնառության ընթացքում, ուստի դրա տրամադրումը նպատակահարմար չէ:

Հ. ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թատրական Երեւան

Լավագույն ավանդույթները վերականգնվում են

ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 18-ը կանցկացվի Երեւանյան միջազգային թատերական առաջին փառատոնը: Փառատոնի կազմակերպիչն է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը:

Փառատոնի մեկնարկից առաջ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը, թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը, Երեւանի քաղաքապետարանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության մշակույթի եւ համագործակցության հարցերով խորհրդական Գիյոմ Նարժուլեն:

Ասուլիսին ներկա էր նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է փառատոնի մեկնարկի առիթով եւ շնորհակալություն հայտնել թատրոնի անձնակազմին նախաձեռնության իրականացման համար:

«Շատ կարեւոր է արվեստի բոլոր ոլորտներում պահել որակյալ բարձր նշանը եւ զարգացնել այն: Միջազգային համագործակցությունն այն ուղին է, որով հասնելու ենք այդ նշանին: Երեւանի միջազգային թատերական փառատոնը կդառնա մեր մշակութային կյանքի անբաժանելի մասը, եւ հույսով եմ, որ յուրաքանչյուր տարի կգրանցենք փառատոնի նոր հաջողությունները»,- ասել է նախարարը ընդգծելով Երեւանի քաղաքապետարանի եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության հետ արդեն ավանդույթ դարձած համագործակցության կարեւորությունը, ինչպես նաեւ մարզային թատրոնների մասնակցությունը:



Նախարարն անդրադարձել է նաեւ ներկայումս պետության առջեւ ծառայած մարտահրավերներին մշակույթով դիմակայելու անհրաժեշտությանը. «Պետության առջեւ ծառայած մարտահրավերներին դիմակայելու առումով մշակույթը ամենակարեւոր բաղադրիչներից է: Այս օրերին ավելի են կարեւորվում մեր առնչությունները մշակույթին, քանի որ հենց մշակույթն է դժվար խոսակցություններ բացելու եւ դրանով նաեւ ինքներս մեզ հետ խոսելու ճանապարհը: Փառատոնի առաջին ներկայացումը խորհրդանշական է. այն նախատեսված է մեր արցախցի հայրենակիցների համար: Սա մշակութային աջակցություն է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար՝ հաղթահարելու հոգեբանական ծանր ապրումները, որ ունեցել են այս ընթացքում»:

Գոշ Սարգսյանը շնորհավորել է փառատոնի մեկնարկի կապակցությամբ եւ նշել է, որ փառատոնի փաստը մեկ անգամ եւս եկել է հաստատելու, որ Երեւանը թատերական ավանդույթներ ունեցող քաղաք է:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նախաձեռնությամբ այս տարի առաջին անգամ տեղի կունենա Երեւանյան միջազգային թատերական փառատոնը: Որպես Հայաստանի

առաջին եւ առաջատար պետական թատրոնը Լճագային թատրոնը հավատարիմ է իր կոչմանը՝ զարգացնել թատերական կյանքը երկրում: Փառատոնի նպատակն է հայ հանդիսատեսին ներկայացնել աշխարհի լավագույն թատերախմբերի բեմադրությունները, հայ թատրոններին միջազգայնացման նոր ուղի հաղորդել, ինչպես նաեւ հնարավորություն ընձեռել մշակույթի ոլորտի մասնագետներին զարգացնել մասնագիտական ցանցը:

Փառատոնի շրջանակում առաջին անգամ Հայաստան կժամանեն այնպիսի հռչակավոր թատրոններ, ինչպիսիք են փարիզյան Օդեոնը, Սանկտ Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնը: Փառատոնը հյուրընկալելու է թատրոններ ԱՄՆ-ից, Լեհաստանից, Վրաստանից եւ, իհարկե, Հայաստանից:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն, փառատոնի հիմնադիր-նախագահ Վարդան Մկրտչյանը նշել է. «Մայր թատրոնը վերջին տարիներին իրականացնում է այնպիսի ծրագրեր, որոնք ակնհայտ հարստացնում են թատրոնի դիմագիծը: Ուրախակին, ըստ իս, այն է, որ բոլոր այդ նախաձեռնությունները ներփակված չեն միայն մեր թատրոնի սահմաններում, այլ օգտակար են լինում հայ թատրոնին ընդհանրական առումով: Հենց այս ընկալումով էլ շարունակում ենք

մեր գործը եւ հիմնում Երեւանյան միջազգային թատերական փառատոնը: Հիմնադրման առաջին իսկ տարում մենք հյուրընկալելու ենք համաշխարհային համբավ վայելող թատրոններ»:

Վարդան Մկրտչյանը շնորհակալություն է հայտնել բոլոր այն կառույցներին, այդ թվում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Երեւանի քաղաքապետարանին, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությանը, «Արմենիա վայն» ընկերությանը, որոնք աջակցել են որպեսզի այս դժվարին ժամանակահատվածում գաղափարն իրականություն դառնա:

Փառատոնի շրջանակում Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը հիմնական ծրագրին ի հավելումն ավելացրել է «Մոխրոտը» ներկայացումը՝ հատուկ ԼՂ-ից բռնի տեղահանված մանուկների համար:

Ողջույնի խոսքով հանդես է եկել նաեւ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը. «Երեւանը շատ թատերական քաղաք է, որովհետեւ Հայաստանը այն քիչ երկրներից է, որտեղ բավականին շատ թատրոններ կան: Երեւանում թատերական փառատոն անցկացնելը երազանք է եղել: Թատրոնն օգնում է հանդիսատեսին հաղորդակցվել իր ժամանակակիցների հետ եւ ազատագրվել շուրջ տիրող քաոսից: Շատ կարեւորում եմ, որ փառատոնին մասնակցում են մարզային թատրոնները, որովհետեւ դրանց ներկայությունը եւ մասնակցությունն ավելի կամրացնեն ստեղծագործական ընթացքը»:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության մշակույթի եւ համագործակցության հարցերով խորհրդական Գիյոմ Նարժուլեն բարձր է գնահատել թատրոնի հետ համագործակցությունը եւ վստահություն հայտնել, որ ապագայում համատեղ նոր ծրագրեր եւ գաղափարներ կիրառվեն: Ըստ Նարժուլեի այս համագործակցությունը հայ-ֆրանսիական բարեկամական կապերն ամրապնդելու եւ զարգացնելու եւս մեկ առիթ է:

Նշենք, որ փառատոնին Օդեոն թատրոնի մասնակցությամբ աջակցել են Ֆրանսիական ինստիտուտը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը եւ «Ակբա բանկը»: «Արմենիա վայն» ընկերությունը, որ փառատոնի աջակիցներից է, ստեղծել է փառատոնի անունը կրող հատուկ գինի:



Ի նպաստ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների զարգացման

«Դիջիթեր» տեխնոլոգիական ցուցահանդեսի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՄ) միջեւ ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ ուղղված «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների աջակցմանը: Հուշագիրն ստորագրել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը եւ ԱՏՄ գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Կարապետյանը:

Հուշագրի առաջնային նպատակն է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործումն ու դրա սերտ փոխկապակցումը դպրոցական ընդհանուր ծրագրին, «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» եւ ԳՏՃՄ այլ առարկայական նոր չափորոշիչի արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում իրականացվող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ոչ ֆորմալ կրթական ծրագրի ընդլայնումը:

«Հանրակրթական դպրոցներում ունենք ավելի քան 600 «Արմաթ» լաբորատորիաներ: Հաշվի առնելով թե՛ ժամանակաշրջանը, թե՛ Կրթության ռազմավարության կարեւոր ուղղություններից մեկը՝ ուղղված բնագիտական առարկաների ուսուցման զարգացմանը, այս հուշագիրը հնարավորություն կտա էլ ավելի լայնածավալ աշխատանքներ իրականացնելու, եւ ավելի շատ երեխաների հնարավորություն կտրվի ներգրավվելու «Արմաթ լաբորատորիաների խմբակներում»: Վստահ ենք, որ արտադպրոցական կրթության շրջանակում ստացած գիտելիքը նպաստելու է ֆորմալ կրթության մակարդակի բարձրացմանը»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

ԱՏՄ նախագահ Ալեքսանդր Եսայանի գնահատմամբ՝ հուշագիրը նախատեսում է ԿԳՄՍ նախարարության հետ ավելի սերտ համագործակցության նոր փուլ: ««Արմաթ» խմբավարները կվերապատրաստվեն, որպեսզի լրացնենք «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» առարկաների ուսուցիչների բացը՝ առավել խորացնելու «Արմաթ»-դպրոց համակարգի կապը»,- ասել է Սարգիս Կարապետյանը:

Կողմերը նշել են, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված խմբակավարներին հնարավորություն է տրվել աշխատելու այն դպրոցներում, որտեղ կադրային պակաս կա, իսկ երեխաները ցանկության դեպքում կարող են ներգրավվել խմբակներում:



ՄԱՎԵՏԱ ծրագրի մեկ տարվա արդյունքները

2022 թվականին մեկնարկել է «Չայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում (ՄԱՎԵՏԱ)» երկարաժամկետ ծրագիրը, որի 1-ին փուլը կիրականացվի մինչև 2025 թվականի օգոստոս ամիսը: Նախատեսվում է նաև ծրագրի երկրորդ փուլ՝ 2025-2030 թթ.:

Մեզ հետ զրույցում «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀՀ-ից (ՌԶԳ) ՄԱՎԵՏԱ ծրագրի ղեկավար **Լիլիթ Յուզբախյան** ամփոփել է ծրագրի մեկ տարվա արդյունքները, ինչպես նաև ներկայացրել հետագա անելիքները: Նրա խոսքով՝ ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներին, բարելավել կին և տղամարդ մասնագետների, շրջանավարտների գիտելիքներն ու հմտությունները, որոնք կնպաստեն նրանց կայուն, միջավայրի համապատասխան ներառական առաջընթացին, եկամտի աճին, ինչպես նաև կիսբանե գյուղատնտեսության և հարակից ոլորտներում զբաղվածությունը:



Եւ այս տարի առաջին անգամ դա հաջողվել է՝ դուրս համակարգի ներդրման շնորհիվ»,- նշում է Լիլիթ Յուզբախյանը ընդգծելով, որ ծրագրի շրջանակում գործնական ուսուցումն ընկերություններում և ֆերմերային տնտեսություններում կհամակցվի ՄԱՎԵՏԱ հաստատությունների տված ժամանակակից գիտելիքների հետ, և դուրս կրթության այս մոտեցումը կամրազրկի ինստիտուցիոնալ մակարդակում:

ՄԱՎԵՏԱ ծրագիրն իրականացվում է Երեւանում և ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի, Արմավիրի մարզերում՝ համագործակցելով Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի, Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի, Բերդի բազմագործառնության քոլեջի, Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարանի և ՀԱԱՀ-ի Երեւանի և Սիսիանի մասնաճյուղերի միջին մասնագիտական կրթական ծրագրերի, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում գործող մասնավոր հատվածի հետ:

Նրա խոսքով՝ ներկայում երեք խումբ է ձևավորվում՝ վերանայելու մյուս երեք մասնագիտությունների մոդուլային ծրագրերը՝ գյուղատնտեսության մեքենայացումը, կաթնաֆերմայի կառավարումը, պտղատու այգիների այգեգործություն/ընկույզի և մրգերի մշակումը: Ընդ որում՝ վեց մասնագիտությունները բաշխված են տարբեր ուսումնական հաստատությունների վրա՝ տարբեր մասնագիտություններով: «Օրինակ՝ Ստեփանավանում ներդրվելու է 6 մասնագիտությունից 5-ը, Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջում՝ 4-ը, Բերդի բազմագործառնության քոլեջում՝ 2-ը: Կամ մեկ այլ օրինակ՝ «Պտղատու այգիների այգեգործություն/ընկույզի և մրգերի մշակում» նոր մասնագիտությունը ներդրվելու է միայն նախնական մասնագիտական կրթական ծրագրով»,- նշում է Լիլիթ Յուզբախյանը:

Ըստ մեր զրուցակցի՝ ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակում ընտրված մասնագիտությունները ներառում են անասնաբուծությունը, կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիան, ֆերմերային գործը, գյուղատնտեսության մեքենայացումը, կաթնաֆերմայի կառավարումը, պտղատու այգիների այգեգործություն/ընկույզի և մրգերի մշակումը:

Մեր այն հարցին, թե ծրագրի ներդրման այս մեկ տարվա ընթացքում ինչ խնդիրներ են առաջացել և արդյոք հնարավոր բոլոր ռիսկերը գնահատվել են, մեր զրուցակիցը փաստում է, որ դժվարություններ, իհարկե, կան. «Քանի որ ծրագրի բոլոր մասնագիտությունները գյուղատնտեսական են, հետևաբար այդքան էլ զրավիչ չեն երիտասարդների համար: Վերջիններս նախընտրում են ժամանակակից այլ ոլորտներ, օրինակ, մենեջմենթ, տուրիզմ, ՏՏ և այլն: Սակայն քանի որ գյուղատնտեսությունը համարվում է պետության համար գերակա ոլորտ, որտեղ մասնագետների խիստ կարիք կա, ծրագիրն իրականացնում ենք հենց գյուղատնտեսական մասնագիտու-

թյունների գծով՝ դուրս համակարգով: Մենք պետք է անենք հնարավորը՝ այս մասնագիտությունների գծով երիտասարդներին քոլեջներ և ուսումնարաններ բերելու համար: Հաջորդ դժվարությունը ուսհաստատությունների համար գործատուներ գտնելն է, որպեսզի կարողանան աշկերտներն տեղավորել աշխատանքի, քանի որ դուրս կրթությունը ենթադրում է գործնական մասն անցնել գործատուի մոտ: Այն չի լինելու զուտ պրակտիկա, այլ գործատուն ուսանողին ներգրավելու է որպես աշխատող, որին նաև վարձատրելու է: Հետևաբար, այս գործընթացը ուսհաստատության համար հավելյալ աշխատանք է, և այս հարցում ծրագիրը նրանց աջակցում է՝ հնարավորինս մեծ թվով գործատուներ գտնելու, կրթական հաստատությունների և պետական ու մասնավոր հատվածի միջև համագործակցությունն էլ առավել արդյունավետ դարձնելու համար»,- ընդգծում է Լիլիթ Յուզբախյանը:

Հաջորդ խնդիրը, ըստ մեր զրուցակցի, դասախոսների որակական պատրաստվածությունն է: Այդ նպատակով ծրագրի շրջանակում իրականացվել են դասախոսների վերապատրաստումներ, այդ թվում՝ մեթոդական և մասնագիտական: «Շվեյցարացի մեր գործընկերների, ինչպես նաև միջազգային և տեղական փորձագետների միջոցով իրականացրել ենք տարբեր թեմաներով պրակտիկ դասընթացներ, որոնց արդյունքում բարձրացել է դասախոսների որակավորումը, և նրանք դարձել են առավել մրցունակ: Իհարկե, լավ կլիներ, որ պետությունը ևս աներ համապատասխան քայլեր՝ դասախոսների աշխատավարձի բարձրացման և մասնագիտական աճի տեսանկյունից: Վերապատրաստումներ ենք իրականացրել նաև գործատուների համար՝ նրանց տրամադրելով համապատասխան խորհրդատվություն: Մեր կողմից իրականացված տարբեր միջոցառումները միտված են ուսհաստատություններին ու գործատուներին մեկ ընդհանուր դաշտ բերելուն, որպեսզի վերջիններս վեր հանեն առկա խնդիրները, համատեղ քննարկեն դրանք և փորձեն լուծումներ գտնել»,- հանդգնում է մեր զրուցակիցը:

Լիլիթ Յուզբախյանն ասում է՝ ծրագրի շրջանակում ՀՀ Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում իրականացվել են «Մասնագիտությունների խթանման օրեր» միջոցառումները՝ ներկայացնելու ծրագրում ներառված և վերանայված մասնագիտությունները: Միջոցառումների ընթացքում գործատուները ներկայացրել են իրենց գործունեությունը և առկա հնարավորությունները, իրականացվել են նաև պրակտիկ աշխատանքներ՝ այսպիսով փորձելով ոգեւորել երիտասարդներին ընտրելու բարձր վարձատրությամբ գյուղատնտեսական մասնագիտությունները:

«Այցելել ենք նաև դպրոցներ, ներկայացրել դուրս համակարգով ուսուցանվող գյուղատնտեսական մասնագիտությունները»

րի առավելությունները՝ այսպիսով նպաստելով դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը: Նրանք հավաստիացրել ենք՝ դուք ևս կարող եք դառնալ հաջողված մասնագետներ, և ձեր կարիքը կա գյուղատնտեսության ոլորտում: Մեր մյուս միջոցառումը Գորիսում կազմակերպված աշխատանքի տոնավաճառն էր, որտեղ գործատուները ներկայացրել են իրենց թափուր աշխատատեղերը և հնարավորությունները: Տոնավաճառին ներկայացվել են նաև դուրս կրթությամբ իրականացվող մասնագիտությունները և դրանց առավելությունները: Բացի դրանից՝ տեղի մարզային ՀՀ-ների հետ հանդիպումներ ենք կազմակերպել նաև որոշ շահառու խմբերի՝ հաշմանդամություն ունեցող, սոցիալապես անապահով անձանց հետ՝ վստահեցնելու, որ նրանք ևս տեղ ունեն գյուղատնտեսության ոլորտում, կարող են դառնալ հաջողակ մասնագետներ և հիմնել իրենց բիզնեսը: Դասախոսների համար դասընթացներ ենք իրականացրել գեներալային հավասարության մասով՝ ինչպես կանանց ներգրավել գյուղատնտեսության ոլորտում, որը չի սահմանափակվում միայն տղամարդկանցով: GIZ-ի հետ իրականացրել ենք դասընթացներ, որոնց ընթացքում ներկայացրել ենք գործատուների հետ կնքվող պայմանագրերի օրինակները, կնքվող հուշագրերը և համագործակցության այլ եղանակները»,- մեկ տարվա կատարված աշխատանքներն է ներկայացնում մեր զրուցակիցը՝ հավելելով, որ իրականացվել է նաև այց Շվեյցարիա, որում ներգրավված են եղել ուսհաստատություններ, մասնավոր հատվածի, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներ:

Լիլիթ Յուզբախյանը վստահ է՝ պետության կողմից վարվող նոր քաղաքականությունը՝ գերակա մասնագիտությունների, այդ թվում՝ գյուղատնտեսական, գծով կրթաթոշակների բարձրացման ուղղությամբ, լուրջ խթան կհանդիսանա ավելի մեծ թվով դիմորդներ ունենալու տեսանկյունից: Մեր զրուցակիցն անդրադարձել է նաև «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքի նախագծին՝ հույս հայտնելով, որ օրենքի ընդունումից հետո կլինեն լուրջ փոփոխություններ՝ պետական աջակցության, բյուջեի ավելացման, գործատուների համար ֆինանսական նոր մեխանիզմների տեսանկյունից:

«Քանի որ ծրագիրը բավականին երկարաժամկետ է՝ երկրորդ փուլը ձգվում է մինչև 2030 թվականը, վերջ փուլով և բոլոր գործընթացները և ուսհաստատություններին աջակցությունը կրելու են շարունակական բնույթ: Ծրագրի շրջանակում անելու ենք հնարավորը՝ դուրս համակարգի հաջող իրականացման և մեր նախաշնչած թիրախներին հասնելու համար»,- մեզ հետ զրույցում ամփոփում է Լիլիթ Յուզբախյանը:

Նշենք, որ ՄԱՎԵՏԱ ծրագիրը ֆինանսավորվում է միջազգային և տեղական կազմակերպությունների լայն կոալիցիայի կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) գլխավորությամբ՝ ներառյալ ՀՀ կառավարությունը, Ավստրիական զարգացման գործակալությունը (ADA), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը (BMZ), Շվեյցարիայի եկեղեցու օգնություն (HEKS/EPER) ՀՀ-ն, Իգմիրյան հիմնադրամը, «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀՀ-ն և «Կանանց Ազրո» ՓԲԸ-ն: Ծրագիրն իրականացվում է Գերմանական զարգացման գործակալության (GIZ) և Շվեյցարիայի եկեղեցու օգնության (HEKS/EPER) ՀՀ-ի՝ ՌԶԳ-ի և Բեռնի Կիրառական գիտությունների համալսարանի (HAFL) գյուղատնտեսական, անտառային և պարենային գիտությունների դպրոցի ներգրավմամբ:



Հեղինե Յուզբախյան

Մարզական

«Չայկի Նետեր»-ը՝ կրկին սլացքի մեջ

Հոկտեմբերի 10-16-ը Երեւանում անցկացվել է «Չայկի Նետեր» մեծածախքան միջազգային մրցաշարը, որին տարբեր տարիքային խմբերում Չայաստանից, Վրաստանից, Ղազախստանից եւ Արաբական Միացյալ Էմիրություններից շուրջ 80 մարզիկ է մասնակցել:

Մրցաշարին հետեւել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը**:

«Չայկի Նետեր» միջազգային մրցաշարն անցկացվել է 4 տարիքային խմբերում: Մինչեւ 12 տարեկան մարզիկները մասնակցել են 18 մետր, մինչեւ 16 տարեկան մարզիկները՝ 40 մետր, մինչեւ 20 տարեկան մարզիկները՝ 60 մետր, իսկ 21 տարեկանից բարձր մարզիկները՝ 70 մետր մրցածներում:

Մեծահասակների 70 մետր մրցածներում հաղթողի կոչմանն արժանացել է **Վասիլ Շահնազարյանը**, արծաթե մեդալակիր է դարձել վրացի **Ջավա Մաշեշվիլին**, իսկ լավագույն եռյակը եզրափակել է **Ամիր Սանդուկեզ** Ղազախստանից: Աղջիկների անհատական պայքարում հաղթող է ծանաչվել Ղազախստանի ներկայացուցիչ **Մարինա Ջոյնալան**, երկրորդ տեղը գրավել է **Չիկո Բուտկարաձեն** Վրաստանից, իսկ երրորդ տեղում Չայաստանի ներկայացուցիչ **Արփի Վարդանյանն** է:

Անցկացվել են նաեւ թիմային մրցումներ: 70 մետր մրցածների տղամարդկանց պայքարում հաղթողի կոչմանն արժանացել է «Երեւան 1» թիմը, երկրորդ տեղը զբաղեցրել է «Երեւան 2»-ը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Ղազախստանի երկրորդ թիմը: Կանանց պայքարում թիմային առաջին տեղը զբաղեցրել է հայ եւ վրացի մարզիկներից կազմված թիմը, երկրորդ եւ երրորդ տեղերը գրավել են Ղազախստանի առաջին եւ երկ-



որոր թիմերը համապատասխանաբար:

Չայաստանի մեծածախքան հավաքականի գլխավոր մարզիչ **Բորիս Վասիլյանի** խոսքով՝ մրցաշարին Չայաստանի շուրջ 40 ներկայացուցիչ է մասնակցել. հայ մարզիկները հաջող մրցելույթներ են ունեցել եւ մրցանակային տեղեր զբաղեցրել, ինչը մարզչի գնահատմամբ՝ բավականին զոհացուցիչ է:

Ի դեպ, «Չայկի Նետեր» միջազգային մրցաշարն անցկացվել է շուրջ 10 տարվա դադարից հետո:

«Սա մեր ավանդական մրցաշարերից է, բայց տասը տարի առաջ դադարեցրինք այն անցկացնել՝ մի շարք խնդիրների պատճառով: Ուրախ եմ, որ այս տարի հաջողվեց վերսկսել: Վստահ եմ կշարունակենք ու տարեցտարի

մրցաշարի աշխարհագրությունն ընդլայնելով՝ կունենանք ավելի մեծ թվով մասնակիցներ: Արդեն իսկ հետաքրքրությունը մեծ է», - նշում է Բորիս Վասիլյանը:

Չայաստանում մեծածախքանը զբաղվող շուրջ 80 երեխաներ կան, որոնք մարզումներն իրականացնում են Երեւանում, Գյումրիում եւ Վշտարակում: Հավաքականի գլխավոր մարզչի խոսքով՝ առաջիկայում եւս մեկ մրցաշար կանցկացվի՝ արդեն տեղացի մարզիկների մասնակցությամբ:

Նշենք նաեւ, որ Չայաստանի մեծածախքան հավաքականը նույնեբերին, ամենայն հավանականությամբ, միջազգային մրցաշարի կմասնակցի Տաջիկստանում, իսկ դեկտեմբերին՝ Ռուսաստանում:

Նախագիծ

Փոփոխություններ գործուղման կարգում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է «Չանրակրթության մասին» օրենքի փոփոխությամբ:

ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N 40-Ն հրամանով սահմանված է, որ համապատասխան մասնագետները գործուղվում են սահմանված կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ: «Չանրակրթության մասին» օրենքում մինչդեռ կատարվել է փոփոխություն, որի համաձայն՝ «սահմանված կամ բարձրլեռնային բնակավայրերի» բառերը փոխարինվել են «մարզերի» բառով հստակություն մտցնելով ոչ միայն գործընթացի ֆինանսավորման համար, այլեւ կարգավորելով ուսուցչի բնակության վայրից կոնկրետ ՀՀ մարզեր գործուղվելու հարցը: Հետեւաբար, առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է մասնագետների գործուղման գործող կարգում առկա ձեւակերպումը համապատասխանեցնել «Չանրակրթության մասին» օրենքում առկա ձեւակերպմանը:

Փոփոխությունը պայմանավորված է նաեւ մարզերի դպրոցներում առկա մանկավարժների մեծաթիվ թափուր հաստիքները համալրելու անհրաժեշտությամբ: Գործող կարգով գործուղվել են 15 մասնագետներ, որի արդյունքում հաստատություններում առկա թափուր տեղերի համալրման խնդիրը էականորեն չի լուծվել եւ շարունակում է մնալ հույժ կարեւոր ու արդիական: Փոփոխության արդյունքում մասնագետների գործուղման կարգում հստակեցում կմտցվի, ինչպես նաեւ մարզերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետների գործուղման գործընթացը կդառնա առավել ճկուն եւ կնպաստի ներկայումս հաստատություններում առկա ուսուցիչների թափուր տեղերի համալրմանն ու երեխաների կրթության շարունակականության ապահովմանը:

Նախագծով նաեւ «աշխատավարձի հավելում» բառերը փոխարինվում են «աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրավճար» բառերով: Այս փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախարարի հրամանով նախատեսված 30 տոկոս լրացուցիչ վարձատրությունն Աշխատանքային օրենսգրքով սահմանված «հավելման» եզրույթին չի համապատասխանում: Փոփոխության արդյունքում հրամանը կհամապատասխանեցվի Աշխատանքային օրենսգրքի կարգավորումներին:

Հ. ՀՈՎՀՆԱՆԻՍՅԱՆ

Աջակցության հարթակ

Թափուր հաստիքներ են առկա գրեթե բոլոր առարկաներից

ԿԳՄՍ նախարարության կողմից հավաքագրվել է ՀՀ մարզերում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա ուսուցիչների թափուր հաստիքները, որոնք զբաղեցնելու համար Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչները կարող են դիմել արտամրցութային կարգով:

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, արդեն գործարկվել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության հարթակը, որտեղ ըստ քայլերի հաջորդականության ներկայացված է, թե ուսուցիչները ինչպես պետք է ՀՀ մարզեր ուսուցիչների գործուղման համակարգում գրանցվեն եւ հայտ ներկայացնեն: Հարթակի գործարկման պահին ուսուցիչների թափուր հաստիքների թիվը կազմել է 1422. Իսկ տեմբերի 17-ի դրությամբ այդ թիվը նվազել է 1385:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանի** խոսքով՝ թափուր հաստիքներ են առկա գրեթե բոլոր առարկաներից:

«Մենք մշտապես խոսում ենք այն մասին, որ բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների մեծ բաց ունենք, բայց դատելով հավաքագրված բազայից՝ այնպես չէ, որ միայն բնագիտական առարկաներից են թափուր հաստիքները: Գրեթե բոլոր առարկաների մասով առկա են թափուր հաստիքներ, եւ բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներն էլ հնարավորություն կունենան ընտրելու իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք: Իհարկե, կան թափուր հաստիքներ, որտեղ դասաժամերի քանակը քիչ է, բայց ԿՏԱԿ-ի հարթակում տեղադրված է մանրամասն տեղեկատվություն, թե որ դպրոցում որ առարկայից կա թափուր հաստիք, քանի դասաժամով եւ որքան կկազմի աշխատավարձը տվյալ ժամաքանակով աշխատելու պարագա-



յուն: Դիմողը կարող է ուսումնասիրել ու հասկանալ՝ իրեն որքանով է հարմար այդ աշխատանքը», - պարզաբանում է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ նախարարությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 400 ուսուցիչներից դիմումներ է ստացել, հավաքագրվել են նրանց տվյալները, եւ ստեղծվել է բազա. «Մեր ունեցած տեղեկություններով՝ ԼՂ-ում աշխատում էին շուրջ 1500 ուսուցիչներ: Ունենք տեղեկատվություն, որ հանրապետության տարբեր մարզերում շուրջ 100 ուսուցիչներ՝ նախքան օժանդակության օրագրի հաստատումը, իրենց նախաձեռնությամբ արդեն դիմել էին իրենց բնակավայրերի դպրոցներ եւ անցել աշխատանքի»:

Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է նաեւ, որ հանրապետության բոլոր մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները կստանան 30 տոկոս հավելավճար, իսկ որոշ մարզերի՝ Սյու-

նիքի, Վայոց Ձորի հանրակրթական ուսհաստատություններում, Գեղարքունիքի մարզի ճամբարակ եւ Վարդենիս համայնքներում, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջեւան եւ Բերդ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում, 30 տոկոս հավելավճարից բացի, կունենան նաեւ ամենամսյա 50 հազար դրամ լրավճար:

Հիշեցնենք՝ 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության օրագրի շահառու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման հետեւանքով Չայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատած եւ «Չանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխանող այն անձը, որը ցանկություն ունի աշխատելու ՀՀ մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում որեւէ առարկայից ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում, սահմանված կարգով ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում, օրագրի շահառու հանդիսացող անձինք կարող են ներգրավվել այդ հաստատություններում որպես ուսուցիչ:

Այս սկզբունքով շահառուների պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչեւ 2-րդ ուսումնական տարվա ավարտը: Եթե շահառուն երկու անգամ չեղարկում է ներկայացված դիմումը, նա այլեւս առաջնահերթության իրավունք չի ունենում: Ընդ որում՝ օրագրի շրջանակում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում տվյալ ուսուցիչը գրկվում է օրագրից կրկին օգտվելու իրավունքից:

Հասկացությունների փոխհարաբերակցությունը

Իրերը կամ առարկաները համեմատելիս համեմատում ենք դրանց չափը, գույնը, ձևը և այլն: Իրերի և առարկաների միջև փոխհարաբերությունները նկարագրվում են մասնօրինակ բառերով. ավելի երկար - ավելի կարճ, ավելի մոտ - ավելի հեռու, ավելի բարձր, ցածր և այլն:


Հասկացությունները նույնպես կարելի է համեմատել միմյանց հետ: Բայց, ի տարբերություն իրերի և առարկաների, հասկացությունները չունեն գույն, հոտ, չափ: Հասկացությունները՝ մեր պատկերացումներն են, մեր տեսակետը օբյեկտների մասին: Հասկացությունները համեմատելիս համեմատվում են դրանց բովանդակությունը և ծավալները:

Դիտարկենք երկու հասկացություն՝ «քառակուսի» և «ուղղանկյուն»:

Քառակուսու բոլոր կողմերի երկարությունները հավասար են, իսկ ուղղանկյան հակառակ կողմերի երկարությունները գույք-գույք հավասար են:


«Ուղղանկյուն» հասկացության շրջանակն ավելի մեծ է, քան «քառակուսի» հասկացության շրջանակը, քանի որ բոլոր քառակուսիները նույնպես ուղղանկյուն են:

Հասկացությունների միջև փոխհարաբերությունները ակնառու ներկայացնում են շրջանակներով: Այդպիսի պատկերները կոչվում են **Էյլերի** (Էյլեր Լեոնարդ (1707-1781), շվեյցարացի նշանավոր մաթեմատիկոս, ֆիզիկոս և աստղագետ) դիագրամներ: Յուրաքանչյուր շրջան ցույց է տալիս հասկացության ծավալը:



«Հատվող» հարաբերություն

Խաչվելը հարաբերություն է այն հասկացությունների միջև, որոնց ծավալները մասամբ համընկնում են, այսինքն պարունակում են ընդհանուր տարրեր: Ենթադրենք (A) հասկացությունը՝ «լիկատրոնային փոստ», և իսկ (B) հասկացությունը՝ «հայերեն նամակ», ապա՝



Հայերենով բոլոր լիկատրոնային նամակներն ընկնում են երկու շրջանակների հատվող հատվածում:


Հատվող հասկացությունների օրինակ է «մարզիկ» և «մանկավարժական քոլեջի ուսանող» գույքը: Երկու շրջանագծի ստվերային մասում են հայտնվում մանկավարժական քոլեջի ուսանողները, որոնք նաև մարզիկներ են, (A) շրջանի ձախ մասում՝ մանկավարժական քոլեջի ուսանողները, որոնք՝ մարզիկներ չեն, իսկ (B) շրջանի աջ մասում հայտնվում են մարզիկները, ովքեր մանկավարժական քոլեջի ուսանող չեն:

Հատվող հասկացությունների օրինակներ՝

- «մաթեմատիկոս» և «ուսուցիչ»,
- «օրաչու» և «տիեզերագնաց»,
- «ուսանող» և «մարզիկ»,
- «կին» և «ղեկավար»,
- «կեչի» և «ծառ»,
- «գերագնացիկ» և «աշակերտ»,
- «տղամարդ» և «բժիշկ»,
- «գյուղացի» և «տրակտորիստ»,
- «քաղաքաբնակ» և «այգեգործ»:

«Ենթակա» հարաբերություն


Ենթակայությունը հասկացությունների փոխհարաբերություն է, երբ դրանցից մեկի ծավալն ամբողջությամբ մտնում է մեկ այլ հասկացության ծավալի մեջ, բայց չի սպառում այն: Ենթադրենք (A) հասկացությունը՝ «ստեղնաշար» է, իսկ (B) հասկացությունը՝ «ներմուծման սարք», ապա՝



Կամ ենթադրենք (A) հասկացությունը՝ «ծաղիկ» է, իսկ (B) հասկացությունը՝ «բեյի վարդ»:

«Ստորադասական» հարաբերություններ

Ստորադասական հարաբերություն է մի քանի հասկացությունների միջև, որոնց ծավալները չեն հատվում, բայց պատկանում են ավելի ընդհանուր (ընդհանուր) հասկացությանը: Սրանք նույն սեռի տեսակներ են: Եթե (A) հասկացությունը լինի «մագաղաթ», (B) «պապիրոս», (C) «սեպագրություն», (D) «թուղթ», (E) «մագնիսական սկավառակ», (F) «տեղեկատվական կրիչ»: Այստեղ A, B, C, D և E հասկացությունները ստորադասվում են F-ին:



Մեկ այլ օրինակ. «բարություն» և «նպատակին հասնելու համառություն» հասկացությունները ստորադասվում են «բնավորության գիծ» հասկացությանը:


«Հակադիր» հարաբերություններ

Հակադիրհարաբերությամբ են այնպիսի երկու հասկացություններ, որոնք նույն տեսակի են, և դրանցից մեկը պարունակում է այնպիսի հակադիրներ, որոնք մյուսը ոչ միայն հերքում է, այլև դրանք փոխարինում է ուրիշներով բացառելով այդ նշանները (այսինքն հակառակ նշաններով): Հակառակ հասկացություններ արտահայտող բառերը կոչվում են հակադիրներ, որոնք լայնորեն կիրառվում են ուսուցման մեջ: Հակառակ հասկացությունների օրինակներ են՝

- «հսկա» - «գաճաճ»,
- «սպիտակ կոշիկներ» - «սև կոշիկներ»:

Վերջին երկու հասկացությունների ծավալները առանձնացված ինչ-որ երրորդ հասկացության ծավալով, որը ներառում է, օրինակ, «շագանակագույն կոշիկներ» հասկացությունը:

Ենթադրենք (A) հասկացությունը, «փոքր հիշողությամբ համակարգիչ» է, (B) հասկացությունը՝ «մեծ հիշողությամբ համակարգիչ», ապա՝



Այս երկու հասկացությունների ծավալները բաժանված են երրորդ հակա-

ցության ծավալով, օրինակ՝ «միջին հիշողությամբ համակարգիչ» հասկացությունով:


«Հակասական» հարաբերություն

Հակասական հարաբերակցությամբ են այն հասկացություններ, որոնք նույն տեսակի են, և միեւնույն ժամանակ մի հասկացությունը ցույց է տալիս որոշ հատկանիշներ, իսկ մյուսը հերքում է այդ հատկանիշները, բացառում առանց դրանք որևէ այլ հատկանիշներով փոխարինելու: Ենթադրենք (A) հասկացություն է (օրինակ՝ «խորը լիճ»), ապա մեկ այլ հասկացություն, որը դրա հետ կապված է հակասական հասկացությունը կլինի ոչ-(A) (օրինակ՝ «ոչ խորը լիճ»): Եթե (A) հասկացությունը լինի «նոր համակարգիչ», մեկ այլ հասկացություն, որը կապված է դրա հետ հակասությամբ, պետք է նշանակվի ոչ-(A) այսինքն՝ «ոչ նոր համակարգիչ»: Օրինակ՝

- «պրանքը կարող է լինել կամ թանկ կամ ոչ թանկ,
- «սենյակը լուսավոր է, կամ ոչ լուսավոր,
- կենդանի - ողնաշարավոր կամ անողնաշարավոր և այլն:

(A) հասկացությունը դրական է, իսկ ոչ (A) հասկացությունը՝ բացասական: A և not-A հասկացությունները նույնպես հակադիրներ են:

Էյլերի շրջանը, որն արտահայտում է մանա հասկացությունների շրջանակը, բաժանված է երկու մասի (A և ոչ A), և նրանց միջև չկա երրորդ հասկացություն:



Արդա ՍՄՐԳՅԱՆ
ՀՀ ԿԳՄՍՆ ԿՁՆԱԿ ԻՒՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՓՈՐՐՈՇԻ ԼՐԱՄՆԱԿՄԱՆ ԵՒ
ԳԱՐԳԱԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԱԵՏ



«Համարժեք» հարաբերություն

Համարժեք են հասկացությունները, որոնք, բովանդակությամբ տարբերվելով, ունեն հավասար ծավալներ: Դրանք պատկանում են կամ մեկ տարրից բաղկացած դասի, կամ մեկից ավելի տարրից բաղկացած առարկաների միեւնույն դասին: Համարժեք հասկացությունների օրինակներ.

- «Նեղոս գետ» և «աշխարհի ամենաերկար գետը».

- «Քաջ Նազարը» հեքիաթի հեղինակ» և ««Թմկաբերդի առունը» պոեմի հեղինակ»

- «հավասարակողմ ուղղանկյուն» և «քառակուսի» և «հավասարանկյուն շեղանկյուն»:

Համարժեք հասկացությունների ծավալները պատկերված են շրջանակներով, որոնք լիովին համընկնում են:

Եթե հասկացությունների ծավալները համընկնում են, այլ կերպ ասած՝ մի հասկացության ծավալը հավասար է մյուսի ծավալին, ապա այդ հասկացությունների միջև կապը կոչվում է համարժեք:

Օրինակ՝ «Հայաստանի մայրաքաղաք» (A) և «Երեւան քաղաք» (B) հասկացությունները համարժեք հասկացություններ են: Նրանց միջև փոխհարաբերությունների գրաֆիկական պատկերը կունենա հետևյալ տեսքը.

Ճանաչիր, որ սիրես

Սյունիքի պատմամշակութային հուշարձանները

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Գորիս քաղաքի կենտրոնում է գտնվում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

Եկեղեցու կառուցումը նախաձեռնել են Գորիսի Սելիք-Յուսեփյան մելիքական տոհմի ներկայացուցիչները 1897 թ.: Դրանական միջոցների համգանակությանը մասնակցել է քաղաքի ողջ բնակչությունը: Բանավոր վկայությունների համաձայն եկեղեցու կառուցումը ղեկավարել է իտալահայ ճարտարապետ Տիգրան Պողոսյանը: Եկեղեցին 1903 թ. օծել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Սկրտիչ Ա. Վանեցին (Խրիմյան Հայրիկ, 1892-1907 թթ.): Եկեղեցին կենտրոնաձև է, ուղղանկյուն հատակագծով կառույց է, շարված է 25 X 25 սմ չափի սրբատաշ, միանման ելուստներով իրար ազուցված որձաքարերով, իսկ քարերի միացման տեղերը լցված են կրաշաղախով: Սասնագետների հավաստմամբ՝ եկեղեցին աչքի է ընկել իր եզակի շարվածքով: Եկեղեցու բարձրությունը (խաչի հետ միասին) 28 մ է: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ունեցել է երեք մուտք՝ հյուսիսային, հարավային և արևմտյան: Վերջին շինարարական աշխատանքների ժամանակ հյուսիսային և հարավային մուտքերը փակվել են: Պատերից յուրաքանչյուրի վրա կան երեքական լուսամուտներ: Մուտքերի բացվածքներն ու լուսամուտները եզրված են գորշավուն սրբատաշ բազալտով: Եկեղեցու հյուսիսային պատի վրա ազուցված շինարարական արձանագրության մեջ թվարկված են հին ու նոր կառուցող վարպետների և երկրորդ փուլի աշխատանքներն իրականացրած բարերարների անունները:

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գործել է մինչև 1926 թ.: Խորհրդային տարիներին փակվելուց հետո մինչև 1960-ական թվականները, եկեղեցին օգտագործվել է որպես հացաբերման պահեստ, ապա, մինչև 1988 թ., երկրագիտական թանգարան: 1989 թ. դեկտեմբերին եկեղեցին վերաբացվել է: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդանիստ է: Առաջնորդարանի շենքը կառուցվել է XIX դարի վերջին: Հետագայում եկեղեցին և հարակից կառույցները բազմիցս վերանորոգվել են: 1995 թ. կրկին իրականացվել են եկեղեցու վերանորոգման աշխատանքներ: 1997 թ. դեկտեմբերի 20-ին մեծ հանդիսավորությամբ տեղի է ունեցել վերակառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերածման արարողությունը: Վերանորոգման վերջին աշխատանքներն իրականացվել են ճարտարապետ Սեւադա Չաքարյանի նախագծով: Եկեղեցու բակում կան X-XVIII դդ. թվագրվող խաչքարեր ու տապանաքարեր, իսկ հյուսիսային կողմում, ճարտարապետ Սեւադա Չաքարյանի նախագծով, 2005 թ. տեղադրվել է հուշարձան՝ նվիրված հանուն հայրենիքի զոհված հերոս հայորդիներին:

* * *

1920 թ. Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն է կատարվել **Գարեգին Նժդեհի և Արուսյակ Մինասյանի** պսակադրության հանդիսավոր արարողությունը: Հաջորդ տարի՝ 1921 թ. փետրվարին, փիլիսոփա զորավար Գարեգին Նժդեհը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն օծվել է սպարապետ:

Նժդեհի զանգեզուրյան գործունեությունը սկսվել է 1919 թ. օգոստոսի սկզբին, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ուղևորվել է հարավ: Չանգեզուրում օրհասական


դրություն էր. թուրք-թաթարները, օգտվելով ՀՀ-ի ներքաղաքական դժվարին կացությունից, փորձում էին երկրամասն անջատել մայր Հայաստանից: Ահա հենց այդ ճակատագրական օրերին Չանգեզուր հասավ մեծն Նժդեհը: Նա նախ և առաջ ազատագրեց թուրքերի կողմից գրավված Ողջիի գետահովտի գյուղերը և հսկողություն հաստատեց Չանգեզուր-Գողթն ճանապարհի վրա: Այնուհետև Նժդեհը ձեռնարկեց Գեղվա ձորի ազատագրման գործը: Գեղվա ձորի ազատագրումից հետո ամբողջ Չանգեզուրը ցնծության մեջ էր: Գարեգին Նժդեհին զանգեզուրցիները մեծարեցին «Երկրորդ Դավիթ բեկ», իսկ թշնամին՝ «Աժդահա փաշա» անվանելով: Այնուհետև մեծ ռազմագետն ազատագրեց Չանգեզուրի համար բացառիկ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Շուռնուխ գյուղը, որը գտնվում էր Կապանը Գորիսին միացնող լեռնանցքում: Աղբյուրների հարկողայնացումից հետո (1920 թ. ապրիլ) այնտեղ գտնվող ռուսական 11-րդ կարմիր բանակի զորքերը վերջնագիր ներկայացրին Հայաստանին պահանջելով Աղբյուրցանին հանձնել Չանգեզուրն ու Դարաբաղը: 1920 թ. ամռանը 11-րդ բանակի զորամասերը, որոնք հիմնականում համալրվել էին Չանգեզուրի և Օրդուբադի թուրք-թաթարական հրոսակներով, գրավում են Գորիսը, այնուհետև՝ Կապանը, սակայն Արեւիքը (ներկայիս Մեղրիի տարածաշրջանը) գրավել չեն կարողանում: Օգտվելով Արեւիքի մարտում կրած նրանց պարտությունից՝ Խուստուփ լեռան լանջերին ամրացած Նժդեհը, փայլուն հակահարձակում իրականացնելով, ազատագրում է Կապանն ու Միսիանը, այնուհետև շարժվում է Գորիս և Տաթևի ու Գորիսի միջև գտնվող Եռաբլուր սարահարթում ջախջախում ձավալ փաշայի զունդն ու մտնում Գորիս:

Լեռնահայաստանում Նժդեհի մղած կռիվները թուրք-թաթարական և բոլշևիկյան ուժերի դեմ հետապնդում էր մեկ գերագույն նպատակ՝ Հայաստանի հարավային դարպաս Լեռնահայաստանը պահել անվաճ և թույլ չտալ թշնամուն իրականացնել իր նկրտումները: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո այդ պայքարն այլևս անհմաստ էր. խորագետ զորավար Նժդեհը հիշեց մի պայմանով՝ պահանջելով, որ Լեռնահայաստանը պետք է լինի թեկուզ խորհրդային, բայց Հայաստանի՝ կազմում: 1921 թ. հուլիսին Գարեգին Նժդեհը հատեց Հայաստանի սահմանը: Սակայն նա երկար ժամանակ չէր հեռանում Արաքսի աջ ափից, որպեսզի իր մեկնումից հետո Չանգեզուրի բնակչության հետ հաշվեհարդար չտեսնեն:

Գարեգին Նժդեհի անձնուրաց մաքառումների և փայլուն հաղթանակների շնորհիվ Չանգեզուրը մնաց մայր Հայաստանի կազմում:

«Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի հայկական ափում գինվորների կողմից զարնված վագրի մորթին՝ իմ միակ վարձատրությունը, ձավալ փաշայի դաշույնը՝ իմ միակ պատերազմական ավարը, պարտություն չտեսած Սյունյաց դրոշակը, թող դա դրվի կրծքիս վրա գերեզմանիս մեջ, և մի հին Հայկազյան բառարան, իմ միակ մխիթարանը տարագրանքի մեջ»:

Գարեգին Նժդեհ



Վահանավանք

Կապան քաղաքից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք՝ Շհարջիկ թաղամասի դիմաց (պատմական Շեկք կամ Շեկս գյուղն է Շհարջիկը, որը 1970-ական թթ. մտել է Կապան քաղաքի շրջագծի մեջ), գտնվում է Վահանավանք վանական համալիրը: Վահանավանքի համալիրի գլխավոր եկեղեցին Սուրբ Գրիգորը, կառուցել է Սյունյաց աշխարհի Բաղդ Գավառի գահակալ իշխան Չագիկի որդի Վահանը (եկեղեցու կառուցումն ավարտվել է 911 թ.): Վահան իշխանի պատվին էլ վանական համալիրը կոչվել է Վահանավանք:

Բացի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց՝ վանական համալիրը ներառում է գավիթը, սյունասրահը (XI դ. կես) և Սուրբ Աստվածածին երկհարկ դամբարան-եկեղեցին (1086 թ.): Համալիրի եկեղեցին, գավիթը և սյունասրահը 1046 թ. վերակառուցել է Սյունյաց իշխանաց իշխան Գրիգորը (հետագայում՝ 1051-1072 թթ., Սյունյաց թագավոր Գրիգոր Ա.): Վահանավանքի գրեթե բոլոր կառույցները կղմնդարածակ են:

Վահանավանքի գլխավոր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին «գմբեթավոր դահլիճ» տիպի կառույց է: Եկեղեցին ունի մեկ զույգ մույթեր, դեպի դահլիճ բացվող երկու ավանդատներ, իսկ ճակատներին «հայկական խորշեր»: Եկեղեցին կառուցված է սրբատաշ բազալտաքարերով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն արեւմտյան կողմից կից է գավիթը, որը XI դ. կեսին կառուցել է Վահանավանքի վանահայր (958 թվականից՝ Սյունյաց մետրոպոլիտ, 968-969 թթ. Հայոց կաթողիկոս Վահան Ա. Սյունեցի) Վահան Ջեւանշերյանը՝ Բաղդ և Չորք գավառների գահակալ, իշխան Չագիկի թոռը և Վահան իշխանի եղբորորդին:

Գավիթը (ժամատուն) երեք թաղակիր կամարներով ուղղանկյուն դահլիճ է, որի գլխավոր մուտքը հարավից է և բացվում է դեպի կից սյունասրահը:

Գավթին հարավից կից է կամարակապ դահլիճի հորինվածքով սյունասրահը, որը ձգվում է եկեղեցու և գավթի ամբողջ երկարությամբ:

Համալիրի մուտքից վեր՝ բարձունքի վրա, Վահանավանքի գլխավոր եկեղեցուց դեպի հարավ, գտնվում է Սուրբ Աստվածածին երկհարկ եկեղեցին: Ըստ արձանագրության՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին 1086 թ. կառուցել են Սյունյաց թագուհի

Շահանդուխտ Բ.-ն և իր քույր Կատան:

Թագուհի Շահանդուխտը Սյունյաց թագավոր Գրիգոր Ա.-ի կինն էր: Վահանավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ հիշատակվում է, որ «Ի:Շլե: (1086 թ.) թվականին, ես՝ շահանդուխտ դուստր սեւադա(յ)ի աղվանից թագաւորի և ամուսին գրիգոր թագաւորի որդւոյ աշուղկա, վասն ոչ գալո մեր ի միասին ժառանգ ըստ մարմնո, ես և քոյրս իմ կատայս շինեցաք զսր աստուածածինս փոխարեն գթոց նորա...»: Սյունյաց թագավոր Գրիգոր Ա.-ն 21 տարի թագավորելուց հետո մահանում է և թաղվում Վահանավանքի գլխավոր եկեղեցու սյունասրահում: Քանի որ Գրիգոր թագավորն ու Շահանդուխտ թագուհին անժառանգ էին, ուստի Գրիգոր Ա.-ի մահից հետո Սյունյաց թագավոր է հռչակվում Շահանդուխտ թագուհու կրտսեր եղբայրը՝ Սենեբերիմը (1072-1094 (կամ 1096) թթ.): Գրիգոր Ա. թագավորի կին Շահանդուխտ թագուհին մահացել է 1116 թ.:

Սուրբ Աստվածածինը երկհարկանի դամբարան-եկեղեցի է, որի առաջին հարկը կառուցված է որպես դամբարան, իսկ դամբարանի վրա էլ բարձրանում է եկեղեցու շենքը: Եկեղեցին միանավ թաղածածկ փոքր կառույց է, որը հյուսիսից և արեւելքից ունի սյունազարդ պատշգամբ: Արեւմտյան կողմում անմշակ քարերով կառուցված գավիթն է: Եկեղեցու չափերը ավելի փոքր են, քան առաջին հարկի դամբարանինը, որի հետեւանքով հյուսիսային և արեւելյան մասում առաջացել է շրջանցող հարթակ: Եկեղեցին կառուցված է սրբատաշ բազալտաքարերով: Դամբարան-եկեղեցին հաված է լեռնալանջին, որի ուղղությամբ էլ տեղավորված են եղել դեպի վեր տանող աստիճանները: Եկեղեցու արեւմտյան կողմում եղել է փոքր սյունասրահով մուտքը: Այս կառույցը վաղ շրջանի երկհարկ դամբարան-եկեղեցիների ուշագրավ օրինակ է և իր զուգահեռն ունի Տաթևի համալիրի մույնատիպ Սուրբ Աստվածածին դամբարան-եկեղեցու ձևերում:

Վահանավանքը հարուստ է վիմական արձանագրություններով: Բազմաթիվ խաչքարերի և տապանաքարերի վրա պահպանված վիմագրերը վկայում են, որ Վահանավանքը եղել է Սյունյաց և Աղվանից թագավորների և իշխանների դամբարան:

շարունակությունը էջ 10

Սյունիքի պատմամշակութային հուշարձանները


սկզբը՝ էջ 9

Այստեղ են գտնվում Վահանավանքի հիմնադիր Վահան իշխանի եւ իր եղբոր՝ Ջեւանշեր իշխանի, Շահանդուխտ թագուհու հոր՝ Սահակ Անեադա Բ.-ի եւ մոր՝ Սուփիա իշխանուհու («Աղվանից թագուհի»), Իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկ) եւ իր թագավոր որդիների՝ Սմբատ Բ.-ի ու Գրիգոր Ա.-ի, Վաչագան իշխանի մայր Խուշուշի եւ այլոց գերեզմանները:

Վահանավանքին կից գործել է վանական դպրոց: Ըստ վիճակագրական տվյալների վանական համալիրի տարածքում եղել են եւս երկու եկեղեցիներ՝ Սուրբ Զարթոյն եւ Սուրբ Սիոն, որոնց տեղադրությունը դեռեւս ճշգրտված չէ:

Հուշարձանախմբի տարածքում պահպանվել են նաեւ ընդարձակ գերեզմանոցը, աղբյուրի եւ բնակելի շենքերի մնացորդները, որոնք վկայում են երբեմնի խոշոր վանական համալիրի գոյության մասին: 1966 թվականից վանքի տարածքում պարբերաբար պեղումներ են կատարվել, որոնք ղեկավարել է պատմաբան, վիճակագետ, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը (1930-2018 թթ.):

Ավանավոր գիտնականը ոչ միայն Սյունիքի, այլեւ Գայաստանի նշանավոր ճարտարապետական գոհարներից մեկի՝ Վահանավանքի նկատմամբ առանձնակի գործվածքի վերաբերմունք ուներ: Երբ 1966 թ. Գրիգոր Գրիգորյանը նշանակվում է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար, ու պետք է պեղումներ կատարվեին հայկական ճարտարապետության Սյունյաց դպրոցի առաջվել հայտնի հուշարձանախմբերից մեկում՝ Վահանավանքում, ահա այդ ժամանակներից սկսած՝ Վահանավանքը դառնում



է խորագետ ու անխոնջ հետազոտողի հնագիտական-վիճակագրական ուսումնասիրությունների առանցքը: Ավելի քան քառասնամյա տքնաքննա աշխատանքի շնորհիվ հայտնաբերվում են մի քանի տասնյակ պատմագիտական մեծարժեք վիճագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում սրբագրումներ եւ լրացումներ կատարելու Սյունիքի եւ Աղվանքի իշխանների, թագավորների, բարձրաստիճան հոգեւորական գործիչների վերաբերյալ մատենագրության մեջ պահպանված տեղեկություններում: Հայտնաբերված վիճագրերը կարելու են Սյունիք եւ Արցախ աշխարհների միջնադարյան պատմության առանձին դրվագներ

րի բացահայտման եւ որոշ հիմնահարցեր լուսաբանելու առումով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ էր դրվում Սյունյաց արքայատան ներկայացուցիչների գահացանկը՝ նշելով նրանց գահակալության ստույգ կամ առավել հավանական տարեթվերը, որոնք մինչեւ վերջերս ոչ լիարժեք, թեական էին ներկայացված հայագիտական աշխատություններում: Գր. Գրիգորյանի՝ մի քանի տասնամյակ տեսած պրպտումներն ու հնագիտական աշխատությունների արդյունքներն ամփոփվեցին 2007 թ. լույս տեսած «Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն» երկվեզու՝ հայերեն եւ ռուսերեն գրքում:

Տարիներ շարունակ ընթացող Վահանավանքի հուշարձանախմբի պեղումներին մասնակցել են հարյուրավոր ուսանողներ, որոնցից մի քանիսը հետագայում դարձել են հասարակական-քաղաքական, պետական գործիչներ կամ գիտության, արվեստի, կրթության եւ մշակույթի այլ բնագավառների անվանի ներկայացուցիչներ: Վահանավանքի պեղումները ղեկավարելու տարիներին եռանդուն հետազոտողը թղթին է հանձնել առավել հիշարժան դեպքերն ու իրադարձությունները, որոնք առանձին գրքով (հայերեն եւ ռուսերեն) լույս են տեսել 2009 թ.: «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» վերնագրով: Խոսելով պեղումների այն մասնակիցների մասին, ովքեր այլեւս մեզ հետ չեն, հեղինակը գրում է. «Գործող անձանցից» շատերն այսօր մեզ հետ չեն. նրանց երբեք չի կարելի մոռանալ: Այս գիրքը մի կերպն է նրանց հիշատակը հավերժացնելու ճանապարհին»: Անգնահատելի է Գր. Գրիգորյանի ներդրումը Վահանավանքի վանական համալիրի ուսումնասիրության եւ հանրահռչակման գործում:

Համալիրի տարածքում խորհրդային տարիներին եւ ապա 2006-2009 թթ. իրականացված վերականգնողական աշխատանքների շնորհիվ ամբողջովին վերականգնվել են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ նրան կից գավիթը: Սյունասարահը մասնակիորեն է վերականգնվել: Վահանավանքի երկհարկանի Սուրբ Աստվածածին դամբարան-եկեղեցին վերականգնվել է դեռեւս խորհրդային տարիներին ականավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի որդու՝ վաստակաշատ ճարտարապետ Յուլի (Յուլիոս) Թամանյանի նախագծով:

Սյունի վանք (Սիսավանքի վանք, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Սուրբ Հովհաննես եկեղեցի)

Սիսիան քաղաքի հյուսիսարեւմտյան մասում մի բարձրադիր հարթության վրա, գտնվում է Սյունի վանքը, որը հայտնի է նաեւ Սիսավանքի վանք, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Սուրբ Հովհաննես եկեղեցի անուններով: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունի վանքի Սուրբ Գրիգոր եկեղեցին (հետագայում վերանվանվել է Սուրբ Հովհաննես) հիմնադրել է Սյունյաց Վարագդուխտ իշխանուհին: Վանքի առջեւ Սյունյաց իշխանները կառուցել են արքունական տուն եւ իշխանահիստ ապարան: IV դ. վերջերին՝ 364-368 թթ. հայ-աքարկական քառամյա պատերազմի ժամանակ, Պարսից արքա Շապուհ Բ.-ի զորքերի կողմից Սյունիքի աշխարհիկ եւ հոգեւոր կենտրոն Շաղատավանքի եւ Շաղատի վանքի ավերումից հետո, Բաբել Սյունու օրոք Սյունիք ավանդ դարձել է Սյունիքի իշխանահիստ եւ եպիսկոպոսանիստ կենտրոն:

յուններում ավանդատներով հորինվածք: Գմբեթի 12-նիստանի թմբուկը զարդարված է կամարաշարով, քիվերը՝ հյուսածո զարդաքանդակով, գմբեթակիր կամարները հենվում են ուղրազարդ խոյակների վրա: Եռաստիճան հիմքերի վրա գտնվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցված է սրբատաշ կապտավուն բազալտից, ունի երկու մուտք՝ հարավային եւ արեւմտյան: Գմբեթի քիվին չորս ավետարանիչների դիմապատկերներն են՝ քանդակված մինչեւ գոտի, աջ ձեռքները վեր բարձրացրած (անունները փորագրված են ներքեւում): Արեւմտյան ճակատին Հովհաննես եկեղեցապանի՝ խիստ եղծված, վնասված հարթաքանդակն է: Ներսում՝ գմբեթի կիսաուղղորտի ներքեւի մասում, Կոհագատ իշխանի, Հովսեփ եպիսկոպոսի եւ Թեոդորոս վանականի բարձրարվեստ պատկերաքանդակներն են, որոնք աչքի են ընկնում ընդգծված անհատականությամբ: Սյունի վանքի Սուրբ Գրիգոր եկեղեցու քարերին շինարար վարպետների 39 փորագիր նշաններն են՝ մեծ մասամբ անվան սկզբնատառի ձևով: Այդ նշաններից մի քանիսը համդիպում են նաեւ Պողոսի, Գվիմի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Թալիմի Սուրբ Աստվածածին եկեղեցիների վրա:



Սյունի վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնվել է հնագույն հեթանոսական տաճարի տեղում: 1988 թ. տաճարի բարեկարգման եւ սալահատակման աշխատանքների ժամանակ տաճարի արեւմտյան մուտքի մոտ՝ հիմքի մակերեսույթից մոտ 1 մ խորության վրա, պատահաբար հայտնաբերվել է հեթանոսական զոհարան բազին: Չոհարանն այժմ մնում է սալահատակի տակ եւ սպասում է գիտական ուսումնասիրության: Դեռեւս IV դ. կառուցված այս եկեղեցին VII դ. վերջին քառորդին հիմնովին վերակառուցել են Կոհագատ իշխանն ու Սյունյաց եպիսկոպոս Հովսեփ Ա-ն (670-689 թթ.): Թեոդորոս Սիոն վարդապետի օժանդակությամբ: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Սյունի վանքն իր նշանակությամբ համարել է Սյունիքի վանքերից երրորդը՝ Տաթևից ու Թանահատից հետո:

Սյունի վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթարկվել 1959-1961 թթ. ընթացքում: Եկեղեցու շրջապատը հողաշերտից ազատվել եւ սալարկվել է, իսկ 1980-1988 թթ. դեպի եկեղեցի տանող մայթեզարավոր ճանապարհ է կառուցվել:

Եկեղեցին գործում է 1979 թվականից: Եկեղեցու բակում տեղադրվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքար, իսկ արեւելյան լանջին Արցախյան հերոսամարտերին մասնակից զոհված սիսիանցի ազատամարտիկների պանթեոնն է:



շարունակությունը էջ 11

Սյունիքի պատմամշակութային հուշարձանները

Որոտնավանք

սկզբը՝ էջ 10

Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Վաղատին գյուղը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1575 մ բարձրության վրա, մարզկենտրոն Կապանից մոտ 90 կմ հյուսիս-արեւմուտք, քաղաքամայր Երեւանից մոտ 225 կմ (դեպի հարավ-արեւելք) հեռավորության վրա: Գյուղից մոտ երկու կմ (դեպի հարավ-արեւելք) հեռավորությամբ գտնվում է հայկական միջնադարյան ճարտարապետության մարզարիտներից մեկը՝ Որոտնավանքը: Հուշարձանախումբն ընդգրկում է Սուրբ Գրիգոր, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Կարապետ եկեղեցիները, զավիթը, սյունասրահները, հյուրատունը, օժանդակ տնտեսական շինությունները, շրջապարիսպը և գերեզմանատունը: Բոլոր հուշարձանները տեղադրված են ուղղանկյուն բակի պարագծով, հիմնականում հյուսիսային և արեւելյան կողմերում, և կառուցված են տեղական բազալտաքարերով: Որոտնավանքը կառուցվել է ամրոցաշինական սկզբունքներով:

Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ վանական համալիրի հնագույն կառույցը Սուրբ Գրիգոր միանավ եկեղեցին է, որը IV դ. հիմնադրել է Գրիգոր Ա. Լուսավորիչը, իսկ վերակառուցել Հայր Ստեփանոս Ջզնավորը: Եկեղեցին վաղ միջնադարում հայտնի է եղել օժահարներին բուժելու իր գործընթացի և դարձել նշանավոր ուխտատեղի:

Սուրբ Գրիգոր եկեղեցու հյուսիսարեւելյան կողմում գտնվում է Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին: Ըստ պահպանված շինարարական արձանագրության՝ եկեղեցին 1000 թ. կառուցել է Սյունյաց Սմբատ թագավորի կինը՝ Շահանդուխտ Ա. թագուհին: Սյունյաց Շահանդուխտ Ա. թագուհին Արցախ-Խաչենի տիրակալ Գրիգոր Արմենեսիանի (Համամ-Գրիգոր) որդի Սահակ Սեւադայի (Գարդման-Փառիսոսի տիրակալ) դուստրն էր, Աշոտ Բ. Երկաթ արքայի կնոջ՝ Սահականույշ թագուհու քույրը: Շահանդուխտ թագուհին Սյունյաց թագավոր Վասակի (998-1040 թթ.) և իշխան Սեւադայի մայրն էր:

Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին

միանավ, թաղածածկ կառույց է, արեւելյան կողմում ունի զույգ ավանդատներ: Երրորդ ավանդատունն էլ տեղադրված է հյուսիսային պատի երկայնքով և կազմում է հյուսիսարեւելյան ավանդատան շարունակությունը:

Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցուն արեւմտյան կողմից կից է XI դ. սկզբին կառուցված թաղածածկ զավիթը:

Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու և զավիթի հարավային կողմերի երկայնքով ձգվում է հարավային ճակատին մեկ լայն պայտածե կամարակապ բացվածք ունեցող թաղածածկ սյունասրահը:

Վանական համալիրի արեւելյան մասում Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու հարավարեւելյան կողմում, գտնվում է Սուրբ Կարապետ եկեղեցին, որը 1007 թ. կառուցել է Շահանդուխտ թագուհու կրտսեր որդին՝ Սեւադա իշխանը: Սուրբ Կարապետ եկեղեցին եռախորան կենտրոնազմբեթ, ներքուստ խաչածե, կառույց է, չորս անկյուններում ունի ավանդատներ: Եկեղեցին կառուցված է սրբատաշ բազալտի քարերով, միակ մուտքը արեւմտյան կողմից է: Եկեղեցու ներսում պահպանված որմնանկարների ամրացման և վերականգնման առաջին փորձը դեռես 1974-1975 թթ. կատարել էին ռուս մասնագետները, սակայն որմնանկարները վերականգնեցին Արա Ջարյանը և բելգիացի Քրիստին Լամուրեն (Լամուրեն) ու իտալացի մասնագետները (2011 թ.):

1438 թ. վանահայր Սարգիս Անգեղակոթցին վերակառուցել է եկեղեցու զմբեթը: 1931 թ. ապրիլի 27-ի Ջանգեզուրի ավերիչ երկրաշարժից քանդվել են Սուրբ Կարապետ եկեղեցու զմբեթն ու ծածկերը:

Սուրբ Կարապետ եկեղեցու արեւմտյան պատի ամբողջ երկայնքով ձգվում է բաց, կենտրոնական մասում երեք մեծ կիսաշրջանածե կամարներով սյունասրահը: Կամարակապ սյունասրահը եկեղեցուց ուշ է կառուցվել:

Որոտնավանքի վանական համալիրի արեւմտյան կողմում են գտնվում հյուրատունը, որը եւս կառուցվել է ավելի ուշ՝ 1326 թ. և վանական համալիրի օժանդակ շինու-



թյունները, որոնք կառուցել է Շահանդուխտ թագուհին XI դ. սկզբներին:

Սուրբ Կարապետ եկեղեցու հյուսիսային պատին կից, եռաստիճան պատվանդանի վրա, XI դ. հուշայուն է կանգնեցվել՝ զագաթին խոյակի վրա դրված խաչարձան: Հուշայունը կործանվել է 1931 թ. ապրիլի 27-ի ավերիչ երկրաշարժից:

Որոտնավանքի շրջապարիսպը պարփակել է համալիրը արեւելյան, արեւմտյան և հարավային կողմերից, իսկ հյուսիսային կողմից վանական համալիրի պաշտպանական համակարգի մասն են կազմում հուշարձանների պատերը:

Վանական համալիրի պարսպափակ բակում տարածվում է ընդարձակ գերեզմանատունը, որտեղ պահպանվել են X-XVI դդ. խաչքարեր ու տապանաքարեր: Որպես իշխանական տոհմի գերեզմանատուն ծառայել են Սուրբ Ստեփանոս Նախավկա և Սուրբ Կարապետ եկեղեցիներին կից սյունասրահները, որտեղ ամփոփված են վանական համալիրի հիմնադիր Շահանդուխտ թագուհին և իր որդի Սեւադան:



Որոտնավանքը եղել է հայ գրչության նշանավոր կենտրոններից: Այստեղ գործել

են Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել ծաղկողը և այլք: Հովհան Որոտնեցին Գլաձորի համալսարանից Որոտնավանք է տեղափոխվել 1340-ական թթ.: XIV դ. 80-ական թթ. Որոտնավանքում է գործել Գրիգոր Տաթևացին, որը 1386 թ. այստեղ ընթրիհանակել է Պետրոս Արագոնացու «Գիրք եւթն առաքինութանց» երկը: 1407 թ. վանք է այցելել Թովմա Մեծոփեցին: Նույն տարում Որոտնավանքում Առաքել ծաղկողը Ավետարան է գրչագրել և նկարազարդել:

Համալիրի վերականգնման ու վերանորոգման աշխատանքները սկսվել են 1980-ական թթ. և ավարտվել 2013 թ.:

Որոտնավանքից մոտ 3 կմ հարավ-արեւելք գտնվում է միջնադարյան Հայաստանի նշանավոր ամրոցներից մեկը՝ Որոտնաբերդը: Միջնաբերդի զանազան ստորտին Որոտան գետի վրա, Մելիք Թանգի կառուցած միաթռիչք կամարակապ կամուրջն է (1855 թ.):


Արման ՄԱՆՅԱՆ
պատմական գիտությունների
բեկնածու




Ճ ա ն ա չ ե լ զ ի մ ա ս տ ու թ ի լ ն ե լ զ ի ր ա տ

Մարգարիտներ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ քարտերգությունից

Պատմահայր ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ քարտերգակ




Ծով կենցաղոյս հանապազ զիս ալելոծէ, Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ. Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւնէ: Ի համբառնալ իմուն առ քեզ զաչս իմ՝ օգնեա՛ ինձ, տէր: Ի յօրնութիւն նոր օրհնեսցուք զքեզ, Քրիստոս փրկիչ մեր: Այցելու մեր եւ փրկիչ, կեցո՛ր զանձինըս մեր:



Ի նեղութեան իմուն օգնեա՛ ինձ, տէ՛ր, Որպէս երբեմն Յովնանու, եւ ողորմեա՛:
Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս, տէ՛ր, Որպէս երբեմն զմաքսաւորն, եւ ողորմեա՛:
Ի նենգաւոր շղթանց փրկեա՛ զիս, տէ՛ր, եւ յարենէ ապրեցո եւ ողորմեա՛:

(Հայ դասական քարտերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 139-140)



Խորհուրդ մեծ եւ սքանչելի, Որ յայսմ աւուր յայտնեցաւ, Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝ Տան աւետիս աշխարհի:

Ծընաւ նոր արքայ Ի Բեթղեհէմ քաղաքի, Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք, Չի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի Ի խանձարուրս պատեցաւ, Ո՛չ մեկնելով ի հօրէ՛ Ի սուրբ այրին բազմեցաւ:

Սիւն լուսոյ եւ ամպիովանի, սուրբ կոյս, Որ ցօղեցեր ի մեզ զցօղն երկնային, Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անկէզ մորենի եւ սերովբէ հողողէն, սուրբ կոյս, Քանգի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ, Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անիծիչ լուծիչ եւ քաւիչ մեղաց, սուրբ կոյս, Որ զանտանելին էից ի գիրկս քո բարձեր Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

(Հայ դասական քարտերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 145)

Վարդան Մամիկոնյանի խոսքը Ավարայրի ճակատամարտից առաջ (հատված ԵՂԻՇԵԻ «Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին» երկից)



Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն եւ ասէ.
«Ի բազում պատերազմունս մտեալ է ին, եւ ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է՝ որ յաղթող գտեալ ենք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչեաք: Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւէր, եւ անողորմ մահ ի սմանէ գտանէր, իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, եւ պարգեւս մեծամեծս յանցաւոր եւ ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ յիրաքանչիւր մարմինս ունիմք վերս եւ սպիս բազումս. եւ բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ եւ պարգեւս մեծամեծս: Անարգ եւ անօգուտ զքաջութիւնսն համարիմ, եւ առ ոչինչ զպարգեւսն բազումս. վասն զի ամենքեան խափանելոց են:
«Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարեալք, որչափ եւս առաւել վասն անմահ Թագաւորին մերոյ, որ Տէրն է կենդանեաց եւ մեռելոց, եւ դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց ենք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցենք ի սմանէ:
«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ միզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զփրկունս դարձուցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձերք մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդրութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»:



Ի մ ա ն ա լ զ ք ա ն ս հ ա ն ճ ա ր ոյ

Իմաստասիրության վեց սահմանումները՝ ըստ ԴԱՎԻԹ ԱՆՅԱՂԹԻ

(հատված «Սահմանք իմաստասիրության» աշխատությունից)



Արդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն, եթէ տեսական է եւ գործական: Այլ ի ձեռն սահմանացն ծանեալք, թէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն. քանզի ի ձեռն սահմանացն, որ յենթակայէն են՝ այս ինքն ի ձեռն այնր որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, եւ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց՝ ուսաք, եթէ տեսական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց՝ ուսաք, եթէ իշխանական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու՝ ուսաք, եթէ մաքրող ախտից է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է մանուկն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան՝ ուսաք, թէ քաղաքական է իմաստասիրութիւն. քանզի քաղաքական իմաստասէր կամի եւ ըստ գիտութեան եւ ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյն մանիլ աստուծոյ:


Եւ պարտ է փութապէս ասել, երկուց տեսակց ելոց իմաստասիրութեան տեսականին եւ գործականին, եւ վեց սահմանաց, ոմանք ի տեսականն իմաստասիրութիւն վերաբերին եւ ոմանք ի գործականն իմաստասիրութիւն վերաբերին: Բանզի երկու սահմանք՝ որ յենթակայէ, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն մարդկայնոց իրողութեանց. եւ մի՛ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, ի տեսական մասն իմաստասիրութեան վերաբերի: Իսկ մի՛ն՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու, եւ միւսն էս՝ որ ի ստուգաբանութենէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն եւ սիրելութիւն իմաստութեան, ի գործական մասն վերաբերին: Իսկ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է մանուկն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, առ երկուսեան վերաբերի:

(Դավիթ Անյաղթ, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», համահավաք քննական քննադրերը եւ առաջաբանը Սեն Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 103)

ԲԱՆ Թ


Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ (հատված ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «Մատյան ողբերգության» պոեմից)

Ա
Եւ արդ, զի՞նչ
արժանաւոր ըստ քեզ
բամբասանս
շարագրեցից
Ի կտակ մաղթանաց
մատենի այսր
ողբերգութեան,
Ո՛վ անձն իմ թշուառ,
ամենապատկառ
Եւ առ պատասխանիս
բանից անբարբառ,
Անպիտան Աստուծոյ եւ
սրբոցն
մասնակցութեան:
Չի եթէ զլիճ մի ծովուց
ի յորակութիւն դեղոյ
յեղելեցից,
Եւ զգաշտս սպարիսօք
բազմօք սահմանեալ՝
Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,
Եւ զպուրակս յոգուցն անտառաց շամբից եղեգանց
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
Եւ ո՛չ գթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց
Չօրեցից ընդ գրով սահմանի գրաւել:
Նա զի թէ զմայրս Լիբանանու ի մեծ լուծ կշռոց զօղեցից,
Եւ կամ զլեռն Արարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ո՛չ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել:



Բ
Ծառս ամբարձուղէշ, ստուարաստեղն,
Տերեւալից՝ ունայն ի պտղոց,
Նմանակից յաւետ հարազատ այնր թգնուոյ,
Չոր Տէրն զաւսացոյց:
Քանզի սաղարթօք վարսից,
Այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից,
Իբր պսակաւ իմիք պաճուճեալ,
Բացականացն զոս բաղձալի,
Իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել զխնդրելին,
Գտցէ զքեզ ունայն ի բարեաց
Եւ զարշելի ի գեղեցկութեանց՝
Ծաղր տեսողաց եւ նշաւակութիւնք նախատողաց:
Չի եթէ ապաժաման յանգգոյշ ժամուն
Չերապանձ տունկն պտղակորոյս, անկենդան,
Որ դոյզն պատկեր է անպատրաստից,
Եկն ընդ անիծիք,
Եւ կամ երկիր, ոռոգեալ ցօղով,
Եւ ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց
Երկրագործութեան տածողացն մատուցանէ՝
Լքեալ մոռանի,-
Իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի,
Սահման բանաւոր եւ տունկ կենդանի,
Եւ ոչ ի ժամու իւրում պտղաւոր,
Ի՞բր ոչ գնոյն կրեսցես պատիժ նախնուն առակիդ:
Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս
յառաւելութեանց,
Սկզբնաւորեալ ի մարդն առաջին
Եւ մինչեւ ի սպառումն ծննդոց նորին,
Չբերս գործոց նանրութեանց եւ զգիտս նորոգս՝
Ատելիս եւ անախորժելիս հաստողին զքեզ՝ աստուծոյ:

(«Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան», Երեւան, «Մուղնի», 2003, էջ 58-59)




ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՅԱԼՈՒՒՒ տաղը՝ ըստ Հայոց այբուբենի

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեալ:
Բոլխունն ի հօրէ,
Բոլխեա՛ ի հօգուոյս
Բան քեզ ի հաճոյս:
Գանձո՞ղ ողորմութեան
Գանձի՞ղ ծածկելոյ
Գտո՞ղ զիս արա:
Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո՞ վերնոցն:
Երբեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա:
Չարթի՞ր, տէ՛ր, յօգնել,
Չարթո՞ գթմբեալս,
Չուարթնոց նմանիլ:
Է՞ղ հայր անսկիզբն,
Էակից որդի,
Է՛ միշտ սուրբ հոգի:
Ընկա՛լ զիս գթած,
Ընկա՛լ, ողորմած,
Ընկա՛լ, մարդասէր:
Թագաւոր փառաց,

Թողութեանց տուող,
Թո՞ղ ինձ գյանցանս:
Ժողովո՞ղ բարեաց,
Ժողովեա՛ եւ զիս
Ժողովս անդրանկաց:
Ի՞ քէն, տէ՛ր, հայցեմ,
Ի մարդասիրել՝
Ինձ բժշկութիւն:
Լե՛ր կեանք մեռելոյս՝
Լո՛յս՝ խաւարելոյս,
Լուծանո՞ղ ցաւոյս:
Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա,
Խորհու՞րդ լուսաւոր:
Ծնունդ հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ,
Ծագեա՛ զլոյս փառաց:
Կենարար փրկիչ,
Կեցո՞ զմեռեալս,
Կանգնեա՛ զզլորեալս:
Հաստեա՛ հաւատով.
Հաստատեա՛ յուսով,
Հիմնեցո՞ սիրով:
Չայնիս աղաչեմ,
Չեռօքս պաղատիմ,

Չիր բարեաց շնորհեա՛:
Ղանբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո՛:
Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս:
Միածինը՞ղ հօր,
Մո՛յժ զիս յառագաստ
Մաքուր հարսանեաց:
Յորժամ գաս փառօք,
Յահագին աւուրն,
Յիշեա՛ զիս, Քրիստոս:
Նորոգող հնութեանց,
Նորոգեա՛ եւ զի՛ս:
Նորոգ՝ զարդարեա՛:
Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զբաւութիւն,
Շնորհեա՛ զթողութիւն:
Ուրախացո՞, տէր,
Ոգուոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:
Չար մշակողին,
Չար սերմանց նորին
Չորացո՞ զպտուղն:
Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա՛ ինոց
Պարտեացս



Սիրտ իմ քարեղէն:
Վասըն գթութեանդ,
Վասըն ողորմութեանդ,
Վերջտիւն կեցո՞:
Տենչալոյդ տեսլեամբ,
Տու՛ր ինձ յագնեալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր,
Րոտեա՛ զաշակերտս
Րամից երկնայնոց:
Յող արեան քո, տէր,
Յօղեա՛ ի հոգիս,
Յնժասցէ անձն իմ:
Իլիծեալըս մեղօք,
Իլիծեալ՝ աղաչեմ,
Իլիսեա՛ յիս բարիս:
Փրկի՛չ բուրից,
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս:

թողութիւն:
Չու՛ր շնորհեա աչացս
Չերմ հեղուլ արտօսր,
Չնջել գյանցանըս:
Ռետիմըղ քաղցու,
Ռամ հոգվոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ:
Սէր անուն Յիսուս,
Սիրով քո ճնլեա՛



Փորձիր լրացնել


Բնություն, տարերք...

Ուղղահայաց

1. Կղզիներ Բալթիկ ծովում: 2. Ռուսաստանի եւ ճապոնիայի ափերը ողողող ծով: 3. Աշխարհի 10 լավագույն կղզիներից, որ գտնվում է Թաիլանդից հյուսիս-արեւմուտք: 4. Ջրվեժ Ավստրալիայում: 5. Գետ, որ 2 անգամ հատում է հասարակածը: 8. Լիճ Արեւմտյան Հայաստանում: 10. Այստեղ է գտնվում «Թռչունների քարանձավը», որտեղ հայտնաբերվեց (2010թ.) աշխարհի ամենահին կոշիկը: 12. Հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատեւ քամի: 14. Քաղաք Սիցիլիայում, այն լիովին ավերվել է երկրաշարժից 1908թ, զոհվել է 83000 մարդ: 15. Այս պետությունում է գտնվում միջնադարյան կերպարվեստի հուշարձանները մեկը՝ Բուդայի քարե, փայտե, բրոնզե արձանները: 16. Եվրոպայի ամենաբարձր լեռնաշղթան, լեռնագագաթը՝ Մոնբլան (4810մ.): 17. Լիճ Ավստրալիայում: 18. Երկնային մարմին, վայր ընկնող աստղ կամ ...: 24. Մասիսի կատարամերձ այս գյուղը կործանվեց երկրաշարժից 1840թ. հունիսի 20-ին: 25. Լիճ ՀՀ Սյունիքի մարզում: 26. Աշխարհի ամենաերկար (7000 կմ) լեռնաշղթան: Այստեղ է գտնվում աշխարհի ամենաբարձր լեռներից մեկը՝ Ակոնկագուան (6962մ): 28. Հայաստանի մայրաքաղաքներից, որ վերջնականապես երկրաշարժից կործանվեց 1319թ.: 30. Ջրհեղեղից փրկված մավապետ: 34. Ծովագնաց, ում ղեկավարությամբ տեղի է ունեցել առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը: 35. Գետ Ռուսաստանում, հոսում է Արխանգելսկի մարզում: 37. Վանա լճի ներկայիս 4 կղզիներից: 39. Քաղաք դաշտային Կիլիկիայում, որտեղ տակավին կանգուն է 6-րդ դարում (Սարոս գետի վրա) կառուցված քարաշեն կամուրջը (22 կամար, թռիչքը՝ մոտ 200մ.): 40. Լիճ Արեւմտյան Հայաստանում: 41. Կոնգոյում գտնվող ամենամեծ եւ հզոր ջրվեժը: 42. Աշխարհի ամենամեծ քնած հրաբուխը: 43. Այսպես են անվանում բարեխառն գոտու փշատերեւ անտառները: 46. Հայոց բնաշխարհի հրաշալիքներից, որ գտնվում է Արեւմտյան Հայաստանի Խնուսի գավառի մոտ: Այն շարժվում է Տաթև վանքի ճոճվող սյան նման. «... քար»: 50. Ջրային համեմատաբար մեղ տարածություն: 52. Լիճ Ֆրանսիայի հյուսիսում: 54. Բյուրակնի լեռներից սկիզբ առնող Հայոց մայր գետը: 55. Գետ Ռուսաստանում եւ Վրաստանում: 56. Ատլանտյան օվկիանոսի ներքամաքային ծով: Կերչի նեղուցով միանում է Սև ծովին:

Հորիզոնական

6. Թասմանի ծովը խաղաղ օվկիանոսի հետ միացնող նեղուցը: 7. Աշխարհի ամենահզոր 2-րդ փոթորկը՝ Ատլանտյան փոթորիկ (2017թ.): 9. Կիրճ Հայաստանի Սյունիքի մարզում: 11. Լիճ Շիրակի մարզում: 13. Արեւելյան Ասիայի ամենաերկար գետերից (2824կմ), իսկ Արգոնի ակունքից՝ 4440 կմ: 15. Լապտերների ծովը թափվող գետ Ռուսաստանում: 17. Թերակղզի Ռուսաստանի Մուրմանսկի մարզում: 19. Բյուրեղյա գեղեցկություն ունեցող ջրվեժ Շոտլանդիայում: 20. Ֆրանսիայի ամենաերկար երկրորդ գետը (Լուարայից հետո): 21. Ամպրոպի ժամանակ կայծակն ուղեկցող ձայնը մթնոլորտում: 22. Հրաբուխ (5400 մ.) Կոլումբիայում: 23. Ռուսաստանում գտնվող աշխարհի ամենավտանգավոր լճերից: 27. Արագածի լեռնալանջերից սկիզբ առնող գետ Շիրակի մարզում: 29. Քաղաք Ռուսաստանում՝ Սեւ ծովի ափին, այն ունի բացօթյա «Գորգիսիա» հնագիտական թանգարան: 31. Ջրվեժների կասկադային համակարգ՝ Կամբոջայի եւ Լաոսի սահմանին: 32. Գետ Ռուսաստանում, հոսում է Վոլգայի մարզում: Լեժա գետի վտակներից: 33. Հայկական լեռնաշխարհի ամենամեծ լիճը՝ Կապուտան կամ ...: 36. Մեծությամբ 3-րդ լիճը Աֆրիկայում. ընկած է Մալավիա, Մոզամբիկ եւ Տանզանիա պետությունների տարածքում: 38. Թափվող ջրի քա-



նակով աշխարհում ամենահզոր ջրվեժը: 44. Լիճ Արագածի լանջին: 45. Հրահեղուկ զանգված, որ առաջանում է հրաբխային ժայթքումների ժամանակ: 47. Գետ հայկական լեռնաշխարհում՝ Սեւ ծովի ավազանում: 48. Գետ Ֆրանսիայում, Բելգիայում եւ Նիդեռլանդներում: 49. Լիճ ՀՀ Կոտայքի մարզում: 51. Լիճ Ուզանդայի եւ Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունների սահմանին: 53. Պետություն Աֆրիկայում, որի անունը աջից կարդալուց դառնում է մետաղի անուն: 56. Գետ ՀՀ Վայոց ձորի մարզում եւ Նախիջեւանի հանրապետության տարածքում: 57. Լեռնային հանգստավայր եւ առողջավայր Կոտայքի մարզի Արզական գյուղի տարածքում: 58. Գետ, որի ափերից մեկը գտնվում է Եվրոպայում իսկ մյուսը՝ Ասիայում: 59. Բնաշխարհի Հայաստանում:

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ



Մարզական

1 ոսկե, 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ

Հայ բռնցքամարտիկներն ավարտել են ելույթները ՄոնտեՆեգրոյի Բուդվա քաղաքում անցկացված Եվրոպայի գավաթի խաղարկությունում նվաճելով 1 ոսկե, 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ: Թիմային պայքարում մեր ընտրանին զբաղեցրել է 3-րդ տեղը:

Գավաթի խաղարկության հաղթող է ճանաչվել աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների բրոնզե մեդալակիր, 92 կգ քաշային **Նարեկ Մանասյանը**: Եզրափակչում նա պետք է մենամարտեր Իտալիայի ներկայացուցիչ Ազիզ Աբեզ Մուհիդինի հետ, որը, սակայն, վնասվածքի պատճառով չի ներկայացել մենամարտին:

Մանասյանը պայքարը սկսել է քառորդ եզրափակչից, որտեղ 5:0 հաշվով առավելության է հասել ալբանացի Գելիան Ռայկուի նկատմամբ: Կիսաեզրափակչում նա 5:0 հաշվով պարտության էր մատնել Յունաստանի ներկայացուցիչ Վազկան Նանիջանյանին:

Հայաստանի հավաքականի կազմում արծաթե մեդալին եւ փոխչեմպիոնի կոչմանն արժանացել է 51 կգ քաշային **Ռուդոլֆ Գարբոյանը** (51 կգ), որը եզրափակչում 0:5 հաշվով զիջել է Ռուսաստանի ներկայացուցիչ Բայեր Բատլաեւին: Գարբոյանը պայքարը սկսել էր կիսաեզրափակչի փուլից, որտեղ 5:0 հաշվով առա-

վելության էր հասել Մալթայի ներկայացուցիչ Ինգադի Խուերեբի նկատմամբ:

Բրոնզե մեդալակիրներ են դարձել **Բարեղամ Հարությունյանը** (48 կգ), **Ռուսլան Ալիկյանը** (54 կգ), **Ռաֆայել Հովհաննիսյանը** (86 կգ) եւ **Արթուր Բազեյանը** (57 կգ):

Կարեն Աղամյանի գլխավորությամբ մրցավայր մեկնել նաեւ մարզիչ **Ռոբերտ Պետրոսյանը**, բժշկ **Հարություն Պրազյանը**: Եվրոպայի գավաթի խաղարկության մրցավարական անձնակազմում ներգրավված է միջազգային կարգի մրցավար **Բազարտ Ավույանը**:



«Սպարտակիադա»

Շախմատի հանրապետական մրցումներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ մարզերի եւ Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև «Սպարտակիադա» մարզական միջոցառման ծրագրով անցկացվել են շախմատի հանրապետական մրցումները:

Շախմատի մրցումներում


հաղթող է ճանաչվել Երևան քաղաքի հավաքական թիմը, երկրորդ տեղը զբաղեցրել է Շիրակի, իսկ երրորդ տեղը՝ Կոտայքի մարզի թիմը:

Հանրապետական եզրափակիչ փուլի մրցումներին մասնակցել է ՀՀ 10 մարզերի եւ Երևան քաղաքի 7-12-րդ դասարանների 55 աշակերտ:

1-ից 3-րդ տեղեր գրաված թի-

մերը պարգևատրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հավաստագրերով, մեդալներով եւ գավաթներով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 7-12-րդ դասարանների աշակերտների միջև «Սպարտակիադա» մարզական միջոցառման ծրագրով մեկնարկել է վոլեյբոլ մարզաձևի մարզային փուլը:



Հայտարարություն

«Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
 - 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
- Մրցույթին մասնակցելու համար հավանորդը ներկայացնում է՝**
- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.
 - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնակազման քարտի պատճենը.
 - 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
 - 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրջային եւ էկելտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.
 - 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի հոկտեմբերի 18-ից նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից**, Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ին**, Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել (033) 27-32-32, (093) 15-93-81 հեռախոսահամարներով: Էլեկտրոնային հասցեն՝ statecollege@list.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական թոլեջ» ՊՈԱԿ-ի հաշվապահական առարկաների (1 դրույթ), Ֆիզկուլտուրա (1 դրույթ), տնտեսագիտական առարկաների (1 դրույթ), զբոսաշրջային առարկաների (0,5 դրույթ), ագրոնոմիական առարկաների (0,5 դրույթ), տեխնիկական առարկաների (գյուղատնտեսական մեքենայացում) (1 դրույթ) առարկաների դասախոսի թափուր տեղերի համար:

Դասախոսի պաշտոնի համար նախատեսված կարծառարկությունը եւ աշխատանքային ծանրաբեռնվածությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Չե 1)
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակը եւ պատճենը)
3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Չե 4)
6. Մեկ լուսանկար (3x4)
7. Այլ պետությունների քաղաքացիները՝

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ-ի համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները:

8. ՀՀ-ի արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը)

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Կոտայքի տարածաշրջանային պետական գյուղատնտեսական թոլեջում, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Երիտասարդական 47:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՍ «Արարատի տարածաշրջանային պետական թոլեջ» ՊՈԱԿ-ի «Քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», «Նախնական մասնագիտական պատրաստվածություն» (460 ժամ) դասախոսի թափուր տեղի համար:

Նշված թափուր տեղի համապատասխանության նկատմամբ թեկնածու պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն կրթություն:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են **մինչև 2023 թ. հոկտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Արարատի տարածաշրջանային պետական թոլեջում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթաբեկյան 156:

Մրցույթը կկայանա **2023 թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:30-ին**, Արարատի տարածաշրջանային պետական թոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-86 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՍ «Երեւանի հ. 46 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (6 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՍ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չե 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատու է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ ԿԳՄՍՍ Երեւանի հ. 46 ավագ դպրոցում, հասցեն՝ ք.Երեւան, Մասանդյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 44-53-01 հեռախոսահամարով:

